**Մակերևութային ջրեր**  
**Հիդրոլոգիական դիտարկումներ**

Հյուսիսային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 21 դիտակետում: Հինգ հիդրոլոգիական դիտակետերի ջրի միջին տարեկան ելքերի վերաբերյալ տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակ 10-ում.

**Աղյուսակ 10. Հրուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.**

Գետ	Դիտակետ	Միջին տարեկան էլքեր, մ <sup>3</sup> /վ		
		փաստացի	նորմա	%
Փամբակ	Վանաձոր	3.69	5.93	62.3
Դեբեդ	Այրում	26.0	33.5	77.6
Չորագետ	Գարգառ	12.0	15.4	77.6
Աղստև	Իջևան	7.07	9.83	72.0
Գետիկ	Գոշ	3.75	3.56	105

**Մակերևութային ջրերի որակ**

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Մալիտակ քաղաքից ներքև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում՝ «միջակ» (3-րդ դաս)։ Մալիտակ քաղաքից ներքև հատվածում՝ պայմանավորված նիտրատ իոնով և ընդհանուր անօրգանական ազոտով, Վանաձոր քաղաքից վերև՝ ամոնիում, նիտրատ իոններով և կախութային չոր նյութերով։ Վանաձոր քաղաքից ներքև ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով։

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով։ Այրում քաղաքից վերև և սահմանի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով։

Չորագետ գետի ջրի որակը Ստեփանավան քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «լավ» (2-րդ դաս)։

Տաշիր գետի ջրի որակը Միխայելովկա գյուղից վերև և Սարատովկա գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։ Միխայելովկա գյուղից վերև՝ պայմանավորված մանգանով, երկաթով, ալյումինով և կախութային չոր նյութերով, իսկ Սարատովկա գյուղից ներքև՝ երկաթով, ալյումինով և կախութային չոր նյութերով։

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս)։

Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, պղնձով, կադմիումով, մանգանով, կոբալտով, սուլֆատ իոնով և կախութային չոր նյութերով։


Գարգառ գետի ջրի որակը ակունքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված կախութային չոր նյութերով։

Շնող գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով։


Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև և ներքև գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։ Դիլիջան քաղաքից վերև՝ պայմանավորված երկաթով և կախութային չոր նյութերով, Դիլիջան քաղաքից ներքև՝ նաև բարիումով։ Իջևան քաղաքից վերև ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով և կախութային չոր նյութերով։ Իջևան քաղաքից ներքև ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, ֆոսֆատ իոններով, երկաթով, բարիումով և կախութային չոր նյութերով։

Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով և կախութային չոր նյութերով։ Գետաբերանի


հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված կախութային չոր նյութերով:





Գծապատկեր 63. Փամբակ գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր 64. Դեբեդ գետի ջրում մոլիբդենի կոնցենտրացիայի փոփոխությունը




Գծապատկեր 65. Ախթալա գետի ջրում պղինձի կոնցենտրացիայի փոփոխությունը



**Ստորերկրյա ջրեր**

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնադրյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Հաղարծինի N2058 դիտակետում դիտվել են ծախսի աննշան տատանումներ, իսկ N2059 դիտակետում՝ կայուն վիճակ:


N2058 դիտակետից մայիս և նոյեմբեր ամիսներին կատարվել է նմուշառում, որտեղ համաձայն ջրի քիմիական ուսումնասիրության արդյունքի հանքայնացումը կազմել է 0.76 և 0.62 գ/լ, կոշտությունը՝ 6.51 և 2.81 մգ.համ/լ, նիտրատները՝ 8.96 և 11.89 մգ/լ, համապատասխանաբար: Նշված ցուցանիշների ՍԹԿ-ները չեն գերազանցվել:



Ֆճապատկեր 68. Հյուսիսային ՋԿՏ-ի բնադրյուրներում ջրի ծախսերի փոփոխությունները



ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2021 թվական




**Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք**

Ախուրյանի ՋԿՏ-ը ներառում է Ախուրյանի և Մեծամորի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:


2021 թվականին Ախուրյանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 10 դիտակետում, որոնցից 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 10%-ում՝ 3-րդ դաս, 70%-ում՝ 4-րդ դաս և 10%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2021 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել, բացառությամբ Ախուրյան գետի՝ Ամասիայից ներքև, Գյումրիից վերև և Բազարանից ներքև դիտակետերի, որտեղ ջրի որակը 5-րդ դասից դարձել է 4-րդ դաս, 3-րդ դասից՝ 4-րդ դաս և 3-րդ դասից՝ 4-րդ դաս համապատասխանաբար:

**Ախուրյանի ՋԿՏ**



Աղտոտված գետերից են Ախուրյանը և Կարկաչունը:

**Ախուրյանի ՋԿՏ թափվող վնասակար նյութեր, 2020թ.**



Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 39 դիտակետում, որից 18-ում՝ նաև որակի մոնիթորինգ:

2020 թվականին այս ջրավազանից ջրառը կազմել է 793 մլն մ<sup>3</sup>, որից 72%-ը բաժին է ընկնում մակերևութային ջրերին, 28%-ը՝ ստորերկրյա ջրերին: Զրոգտագործումն իրականացվել է հիմնականում ոռոգման (78.5%) ձկնաբուծության (16.5%) և արտադրական (2.8%) նպատակներով:

**Մակերևութային ջրեր**

**Հիդրոլոգիական դիտարկումներ**

Հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 14 գետային և 2 ջրամբարային: Երկու հիդրոլոգիական դիտակետերի ջրի միջին տարեկան էլքերի վերաբերյալ տվյալները և նորմերի նկատմամբ շեղումները ներկայացվում են.

**Աղյուսակ 11. Ախուրյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.**

Գետ	Դիտակետ	Միջին տարեկան էլքեր, մ <sup>3</sup> /վ		
		փաստացի	նորմ	%
Ախուրյան	Ախուրիկ	5.16	7.38	69.9
Մեծամոր	Մեծամոր	3.49	20.2	17.3


**Մակերևութային ջրերի որակ**

Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև, Գյումրի քաղաքից վերև, Գյումրի քաղաքից ներքև և Բագարան գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս). Ամասիա գյուղից ներքև՝ պայմանավորված ամոնիում իոնով և երկաթով, Գյումրի քաղաքից վերև՝ երկաթով, Գյումրի քաղաքից ներքև՝ ամոնիում, նիտրիտ իոններով, երկաթով և կախութային չոր նյութերով, Բագարան գյուղից ներքև՝ երկաթով և կախութային չոր նյութերով:

Աշոցք գետի ջրի որակը Մուսայեյյան գյուղից վերև գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված արսենով և բորով:

Վարկաչուն գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի հնգօրյա կենսաբանական պահանջով, թթվածնի քիմիական պահանջով, ֆոսֆատ իոնով, մանգանով և ընդհանուր ֆոսֆորով:

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ, Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք և Ռանչպար գյուղից ներքև հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս). Վաղարշապատ քաղաքից հարավ՝ պայմանավորված ամոնիում իոնով և մանգանով, Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք՝ ամոնիում իոնով և նիտրիտ իոնով, Ռանչպար գյուղից ներքև՝ մանգանով:



Փծապատկեր 69. Ախուրյան գետի ջրում նիտրիտ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը

**Ստորերկրյա քաղցրահամ ջրեր**

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 39 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը, իսկ 18 դիտակետից իրականացվել է նաև նմուշառում՝ ջրի քիմիական ուսումնասիրության նպատակով:


Ախուրյանի ՋԿՏ-ի մոնիթորինգի դիտակետերը Գյումրիի և Արարատյան գոգավորություններում և ներկայացված են բնադրյուրներով և հորատանցքերով: Գյումրիի գոգավորության Առափի գյուղի վարչական տարածքի N2042 դիտակետում, որը գտնվում է Ախուրյան գետի վերին հոսանքի դարավանդում 2021 թվականը գրունտային ջրերի նվազագույն մակարդակը գրանցվել է սեպտեմբեր ամսին (-1.72մ), իսկ առավելագույնը՝ ապրիլ-մայիս ամիսներին (-1.41մ):

Գրունտային ջրերի մակարդակի տատանումները պայմանավորված են Ախուրյան գետի մակարդակի տատանումներով և կազմում են 21%: Շիրակի գոգավորության արևելյան մասում գրունտային ջրերի մակարդակը (դիտակետ N2043) տատանվում է 7.34-9.16մ կազմելով շուրջ 24%: Այս գոգավորության տարածքի որոշ բնադրյուններում բարձր ծախսերը նկատվում են հունվար - փետրվար ամիսներին (N2029, N2031), իսկ ցածրը՝ սեպտեմբեր - դեկտեմբեր ամիսներին: Աննշան տատանումներ են նկատվում նաև ջրերի ընդհանուր հանքայնացման մեջ: Գյումրի քաղաքի Վարդբաղ տեղամասի N2037 դիտակետում ընդհանուր հանքայնացումը 2021 թվականը ընթացքում տատանվել է 443-454մգ/լ: Համաձայն կատարված դիտարկումների Գյումրիի գոգավորությունում չեն նկատվում ստորերկրյա ջրային ռեսուրսների սպառման կամ որակի վատթարացման երևույթներ, իսկ ստորերկրյա ջրերի ներկա վիճակը կարելի է գնահատել լավ: Փաստը պայմանավորված է գոգավորության ստորերկրյա ջրերի շահագործական պաշարների սահմանափակ օգտագործմամբ: Ստորերկրյա ջրերի ծախսի և մակարդակի տատանումները զգալի են Ախուրյանի ՋԿՏ-ում ընդգրկված Արարատյան գոգավորության հյուսիս-արևմտյան մասի դիտակետերում: Գրունտային ջրերի հորիզոնի սնման հիմնական աղբյուրը ճնշումային ջրերն են, որոնք բնականոն պայմաններում վերընթաց շարժման արդյունքում բեռնաթափվում են գրունտային հորիզոնում, երբեմն ավելի բարձր, երկրի մակերևույթում՝ առաջացնելով ճահճացումներ: Ախուրյանի ՋԿՏ-ի տարածքում ճնշումային հորիզոնները ներկայումս շատրվանում են Գայ և Ջրառատ բնակավայրերի վարչական տարածքներում (N1521, N2021), իսկ Արագափ և Ապագա բնակավայրերի տարածքներում կախված ջրառի քանակի ավելացման հետ դրանք դադարել են շատրվանելուց (N1537, N2020), իսկ 2021 թվականը մակարդակները վերականգնվել են (-2.53մ) (N1537) և (-1.43մ) (N2020) խորություններում: Անվիճելի է, որ Ախուրյանի ՋԿՏ-ի Արարատյան գոգավորության սահմանում նկատվում է ստորերկրյա ջրերի մակարդակի անընդհատ իջեցում:

Ախուրյանի ՋԿՏ-ի 18 դիտակետերում 2021 թվականը մայիս և նոյեմբեր ամիսներին իրականացվել են նմուշառումներ, որտեղ համաձայն ջրի որակի ուսումնասիրության արդյունքների N2020, N2042 գրունտային ջրհորներում գերազանցվել են հանքայնացման և նիտրատ իոնների ՍԹԿ-ները, N2022 գրունտային ջրհորում և N2083 հորատանցքում՝ հանքայնացման, իսկ Մարմաշեն գյուղի N2035 աղբյուրում՝ նիտրատ իոնների ՍԹԿ-ները:


*Բնադրյուններ*

*Ախուրյանի ՋԿՏ*




Գծապատկեր 70. Ախուրյանի ՋԿՏ-ի բնադրյուններում ջրի ծախսերի փոփոխությունները







Գծապատկեր 71. Ախուրյանի ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերի ջրի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 72. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ջրի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 73. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 74. Ախուրյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորների ջրի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 75. Ախուրյանի ՋԿՏ-ի բնադրյուններում հանքայնացման փոփոխությունը



Գծապատկեր 76. Ախուրյանի ՋԿՏ-ի բնադրյուններում նիտրատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը


ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2021 թվական



## Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:

2021 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 5%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 30%-ում՝ 3-րդ դաս, 15%-ում՝ 4-րդ դաս և 50%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2021 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել, բացառությամբ Քասախ գետի՝ Ապարանից վերև դիտակետի, որտեղ ջրի որակը 2-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Հրազդան գետի՝ Քաղսիից ներքև դիտակետի, որտեղ ջրի որակը 5-րդ դասից դարձել է 4-րդ դաս: Աղտոտված գետերից են Քասախը,




Գեղարոտը, Հրազդանը, Գետառը և Ծաղկաձորը:

Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 27 դիտակետում, որից 13-ում՝ նաև որակի մոնիթորինգ:

2020 թվականին այս ՋԿՏ-ից ջրառը կազմել է 927.2 մլն մ<sup>3</sup>, որից 39%-ը բաժին է ընկնում մակերևութային, 61%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ձկնաբուծության (47.8%), ոռոգման (37.4%) և արտադրական (7.9%) նպատակներով:

Հրազդանի ՋԿՏ թափվող վնասկար նյութեր, 2020թ.



### Մակերևութային ջրեր

#### Հիդրոլոգիական դիտարկումներ

Հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: Յոթ հիդրոլոգիական դիտակետերի ջրի միջին տարեկան ելքերի վերաբերյալ տվյալները և նորմերի նկատմամբ շեղումները ներկայացվում են.

Աղյուսակ 12. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին տարեկան ելքեր, մ <sup>3</sup> /վ		
		փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	5.05	7.77	65.0
Հրազդան	Արզել	2.96	4.21	70.2
Հրազդան	Երևան	6.23	6.81	91.4
Մարմարիկ	Հանքավան	1.23	1.68	73.3
Մարմարիկ	Աղավնաձոր	3.64	4.79	76.0
Քասախ	Վարդենիս	0.56	1.21	46.1
Քասախ	Աշտարակ	3.38	3.43	98.4

**Մակերևութային ջրերի որակ**

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև, Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։ Ապարան քաղաքից վերև՝ պայմանավորված երկաթով, Աշտարակ քաղաքից վերև՝ ֆոսֆատ իոնով, մոլիբդենով, վանադիումով և երկաթով, Աշտարակ քաղաքից ներքև՝ ֆոսֆատ իոնով և վանադիումով։ Ապարան քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով։ Գետաբերանի հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով։

Գեղարտո գետի ջրի որակը Արագած գյուղից վերև գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով և կոբալտով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով և երկաթով։


Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով և երկաթով։

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով և այլումինով։ Քաղսի գյուղից ներքև ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով։ Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից վերև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)։ Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից վերև պայմանավորված վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանում՝ ամոնիում իոնով և վանադիումով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով և վանադիումով։

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով։


Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով։

Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված՝ ամոնիում իոնով և մանգանով։







Գծապատկեր 77. Քասախ գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը




Գծապատկեր 78. Քասախ գետի ջրում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը




Գծապատկեր 79. Հրազդան գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը




Գծապատկեր 80. Հրազդան գետի ջրում նիտրիտ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Փծապատկեր 81. Հրազդան գետը ջրում ֆուֆատ իռնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Փծապատկեր 82. Փետտա գետի ջրում ամոնիում իռնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Փծապատկեր 83. Փետտա գետի ջրում ֆուֆատ իռնի կոնցենտրացիայի փոփոխությունը

**Ստորերկրյա քաղցրահամ ջրեր**

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 27 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը, իսկ 13 դիտակետից իրականացվել են նաև նմուշառումներ ջրի որակի ուսումնասիրության նպատակով:


Սուլակ գյուղի N1297 դիտակետում 2021 թվականը ծախսերի բարձր արժեքները նկատվել են մայիս-հունիս, իսկ ցածրը՝ դեկտեմբեր-մարտ ամիսներին և տատանվում են 0.03-0.35 լ/վ սահմաններում՝ կազմելով շուրջ 93 %:

Համեմատաբար կայուն ծախսով են բնորոշվում Ապարան քաղաքի N2051 բնադրյուրը, որտեղ ծախսը 2021 թվականը տատանվել է 4.01 – 6.33լ/վ սահմաններում՝ կազմելով շուրջ 37%: Համանման պատկեր է նկատվում Կարբի գյուղի N1636 դիտակետում, որտեղ տատանումները կազմում են 34% :


Տարվա ընթացքում աննշան փոփոխություններ են նկատվում նաև ընդհանուր հանքայնացման և ընդհանուր կոշտության մեծություններում: 2017-2021թթ. N 1636 դիտակետում ընդհանուր հանքայնացումը տատանվել է 0.21 - 0.23 գ/լ, իսկ ընդհանուր կոշտությունը՝ 2.0 - 2.15 մգ.համ/լ սահմաններում:

Նշված ջրադրյուրներում ջրերի որակական և քանակական փոփոխությունները պայմանավորված են միայն բնական պայմաններով:

2021 թվականին Հրազդանի ՋԿՏ-ի 11 դիտակետերից մայիս և նոյեմբեր ամիսներին իրականացվել են նմուշառումներ, որտեղ ջրերի որակի ուսումնասիրության արդյունքում հանքայնացումը գերազանցել է ՍԹԿ-ն NN1519, 2007 և 2053 շատրվանող հորատանցքերում, իսկ նիտրատ իոնի կոնցենտրացիան գերազանցվել է Նիգավան գյուղի N2010 գրունտային ջրհորում:




Գծապատկեր 84. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրյուրների ջրի ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 85. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ջրի մակարդակի փոփոխությունները


Շատրվանոցի հորատանցքեր  
Մակարդակ, մ

Հրազդանի ՋԿՏ



Շատրվանոցի հորատանցքեր  
Ծախս, լ/վ


Հրազդանի ՋԿՏ




Գծապատկեր 86. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանոցի հորատանցքերի ջրի ծախսերի փոփոխությունները

Գրունտային ջրհորներ  
Մակարդակ, մ


Հրազդանի ՋԿՏ



Գծապատկեր 87. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորների ջրի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 88. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրյուններում հանքայնացման փոփոխությունը



Գծապատկեր 89. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրյուններում նիտրատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը




**ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2021 թվական**



## Մևանի ջրավազանային կառավարման տարածք

Մևանի ՋԿՏ-ը ներառում է Չկնագետ, Մասրիկ, Սոթք գետերի գետավազանները և Վարդենիսի ու Գեղամա լեռներից սկսվող գետերը: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային, գյուղատնտեսական և արդյունաբերական կեղտաջրերը:

2021 թվականին Մևանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 17 դիտակետում, որոնցից 17.6%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 58.8%-ում՝ 3-րդ դաս, 23.5%-ում՝ 4-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2021 թվականին ջրի որակի փոփոխություն է նկատվել:




Չկնագետ գետի՝ Սեմյոնովկայից վերև և գետաբերանի դիտակետերի, որտեղ ջրի որակը 2-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Մասրիկ գետի Վերին Շորժայից վերև և գետաբերանի դիտակետերի, որտեղ ջրի որակը 2-րդ դասից դարձել է 3-րդ դաս,

Սոթք գետի՝ գետաբերանի դիտակետի, որտեղ ջրի որակը 3-րդ դասից դարձել է 4-րդ դաս, Կարճաղբյուր գետի՝ Վերին Շորժայից վերև և գետաբերանի դիտակետերի, որտեղ ջրի որակը 2-րդ դասից դարձել է 3-րդ դասի և 4-րդից՝ 3-րդ, համապատասխանաբար: Վարդենիս գետի գետաբերանի դիտակետի, որտեղ ջրի որակը 3-րդ դասից դարձել է 4-րդ դաս: Մարտունի գետի՝ Գեղհովիտից վերև դիտակետի, որտեղ ջրի որակը 3-րդ դասից դարձել է 4-րդ դաս,

Գավառագետ գետի՝ Ծաղկաշենից վերև դիտակետի, որտեղ ջրի որակը դեպքում 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս: Աղտոտված գետերից է Մասրիկը՝ իր Սոթք վտակով:

*Մևանի ՋԿՏ թափվող վնասված նյութեր, 2020թ.*



Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 11 դիտակետում, որից 6-ում՝ նաև որակի մոնիթորինգ:

2020 թվականին այս ՋԿՏ-ից ջրառը կազմել է 33.5 մլն մ<sup>3</sup>, որից 44%-ը բաժին է ընկնում մակերևութային, 56%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ոռոգման (48.4%), խմելու (30.7%) և ձկնաբուծության (17.0%) նպատակով:

### Մակերևութային ջրեր

#### Հիդրոլոգիական դիտարկումներ

Հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 4 լճային (Մևանա լիճ) և 1 ջրանցքում: Հինգ հիդրոլոգիական դիտակետերի ջրի միջին տարեկան ելքերի վերաբերյալ տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացվում են:

**Աղյուսակ 13. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.**

Գետ	Դիտակետ	Միջին տարեկան էլքեր, մ <sup>3</sup> /վ		
		փաստացի	նորմա	%
Ձկնագետ	Ծովագյուղ	1.09	1.09	100
Մասրիկ	Ծովակ	2.93	3.31	88.5
Մարտունի	Գեղհովիտ	1.43	1.68	84.7
Արգիճի	Վ. Գետաշեն	4.00	5.44	73.6
Գավառագետ	Նորատուս	3.31	3.50	94.5

**Մակերևութային ջրերի որակ**

Ձկնագետ գետի ջրի որակը Սեմյոնովկա գյուղից վերև և գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Սեմյոնովկա գյուղից վերև՝ պայմանավորված մոլիբդենով և մանգանով, իսկ գետաբերանում նաև կոբալտով, երկաթով և ալյումինով:

Մասրիկ գետի ջրի որակը Վերին Շորժա գյուղից վերև և գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Վերին Շորժա գյուղից վերև՝ պայմանավորված երկաթով, ալյումինով և կախութային չոր նյութերով, գետաբերանում պայմանավորված ֆոսֆատ իոնով, մանգանով, վանադիումով, երկաթով, ալյումինով, ծարիրով, ընդհանուր ֆոսֆորով և սուլֆատ իոնով:

Մարտունի գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով և ալյումինով:

Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Ախպրաձոր գյուղից վերև՝ պայմանավորված մոլիբդենով, իսկ գետաբերանում՝ նաև վանադիումով:

Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Մարտունի գետի ջրի որակը Գեղհովիտ գյուղից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, գետաբերանում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, բարիումով, կալիումով, ընդհանուր ֆոսֆորով և սուլֆատ իոնով:

Արգիճի գետի ջրի որակը Լեոնահովիտ գյուղից վերև գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով և ընդհանուր ֆոսֆորով:

Ծակքար գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, մոլիբդենով և վանադիումով:

Շողվազ գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, մոլիբդենով, վանադիումով, նատրիումով, ընդհանուր ֆոսֆորով և քլորիդ իոնով:

Գավառագետ գետի ջրի որակը Ծաղկաշեն գյուղից վերև գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով, նատրիումով և ընդհանուր ֆոսֆորով:

Արփա-Սևան ջրատարի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված արսենով, մոլիբդենով, մանգանով և երկաթով:

**Ստորերկրյա ջրեր**

Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 11 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը, իսկ 6 դիտակետերից իրականացվել են նաև նմուշառումներ: Ջրի քիմիական կազմի ուսումնասիրության արդյունքում հանքայնացումն ու նիտրատ իոնները չեն գերազանցել ՍԹԿ-ները:

Ակունք գյուղի N1053 դիտակետում ջրի բարձր ծախսերը նկատվել են 2021 թվականի նոյեմբեր-հունվար, իսկ ցածրը՝ ապրիլ և մայիս ամիսներին: Նշված ժամանակահատվածում ծախսերը տատանվել են 0.75 - 0.89լ/վ սահմաններում՝ կազմելով շուրջ 34%:

Գավառ քաղաքի N2014 դիտակետում ջրի ծախսը 2021 թվականին տատանվել է 0.55 - 1.21լ/վ՝ կազմելով շուրջ 54%: Այստեղ ընդհանուր հանքայնացումը նշված ժամանակահատվածում փոփոխվել է 0.35 – 0.36 գ/լ, իսկ ընդհանուր կոշտությունը՝ 3.19 – 3.39 մգ.համ/լ տիրույթում:



N1053 դիտակետում միջին տարեկան ծախսերը տատանվել են 2.20–1.46լ/վ, իսկ N2014-ում՝ 1.76-0.78լ/վ:



Համաձայն 2021 թվականը դիտարկումների, տարվա ընթացքում N1810 դիտակետում ծախսի փոփոխությունները գրանցվել են 4.77- 8.75լ/վ տիրույթում: Ընդ որում, փետրվար ամսից (4.77լ/վ) նկատվում է ծախսերի անընդհատ ավելացում մինչև դեկտեմբեր (8.75լ/վ):

Բոլոր դիտակետերում միջին տարեկան ծախսերը փոփոխվում են իջեցումներով և բարձրացումներով, չի նկատվում բարձրացման կամ իջեցման ընդհանուր միտում:


Աննշան փոփոխություններ են նկատվում նաև ստորերկրյա ջրերի ընդհանուր հանքայնացման և ընդհանուր կոշտության արժեքներում:

Ներկայումս Սևանի ՋԿՏ-ում չեն նկատվում ստորերկրյա ջրերի քանակի և որակի նշանակալի փոփոխություններ: Դրանք աննշան են և պայմանավորված են բնական պայմաններով:






Գծապատկեր 91. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 92. Սևանի ՋԿՏ-ի բնադրյուններում հանքայնացման փոփոխությունը



Գծապատկեր 93. Սևանի ՋԿՏ-ի բնադրյուններում նիտրատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



## ՀՀ Սեանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2021 թվական



## Սևանա լիճ

2021 թվականին հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել Սևանա լճի 4 դիտակետում՝ (Սևանա թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): 2021 թվականի տարեկան հիդրոոդերնութաբանական տվյալների հիման վրա կազմվել է Սևանա լճի տարեկան ջրային հաշվեկշիռը:

**Աղյուսակ 14. Սևանա լճի 2021 թվականի տարեկան ջրային հաշվեկշիռը**


Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ <sup>3</sup> )	Բազմամյա բնութագրեր (մլն.մ <sup>3</sup> ) 1961–2020թթ.		
	Տարվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
<i>ՄՈՒՏՔ</i>				
Լիճը թափվող գետերով	615.66	513.3	770.5	1125.3
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը. այդ թվում ստորերկրյա ներհոսքը	157.45	19.8	195.7	311.5
Տեղումները լճի մակերևույթի վրա	387.3	367.7	505.7	802.3
Ստորերկրյա հոսք	94.2	48.4	79.1	106.7
Ընդամենը	1254.61	931.0	1482.3	2084.8
<i>ԵԼՔ</i>				
Հրազդան գետով	227.65	99.5	417.4	1644.2
Գոլորշացում լճի մակերևույթից	1216.6	916.2	1086.1	1371.4
Ստորերկրյա հոսք	14.4	5.40	13.4	20.0
Ընդամենը	1458.65	1080.4	1511.2	2614.0
Կուտակում (նվազում)	-114.7	-1689.0	-35.2	907.3
Բացարձակ անկապք	-89.34		1.00	
Հարաբերական անկապք %	6.12	0.20	3.26	17.0

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ <sup>2</sup>	Լճի ծավալը, կմ <sup>3</sup>
Տարվա առաջին օրը	1900.52	1278.701	38.2022
Տարվա վերջին օրը	1900.43	1277.845	38.0875
Միջին տարեկան	1900.62	1279.648	38.3304

Մակարդակի փոփոխությունը տարվա ընթացքում

-0.09 (մ)

2021 թվականի հունվարի 1-ին լճի մակարդակը կազմել է 1900.52մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ բարձր է եղել 9սմ-ով: 2021 թվականի դեկտեմբերի 31-ին լճի մակարդակը կազմել է 1900.43մ, որը հունվարի 1-ի համեմատ ցածր է եղել 9սմ-ով: 2021 թվականի ընթացքում ամսական կտրվածքով լճի մակարդակը ամենաշատը բարձրացել է մայիս ամսին՝ 15սմ-ով, և ամենաշատն իջել է հունիսին և օգոստոսին 10սմ-ով: Ամսական կտրվածքով մակարդակի փոփոխությունները ներկայացված են գրաֆիկում.



Գծապատկեր 94. Սևանա լճի մակարդակի ամսական փոփոխությունները

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Սևանա լճի մակերեսը կազմել է 1278.701կմ<sup>2</sup>, իսկ լճի ծավալը կազմել է՝ 38.2022կմ<sup>3</sup>, դեկտեմբերի 31-ի դրությամբ լճի մակերեսը կազմել է 1277.845 կմ<sup>2</sup>, իսկ ծավալը՝ 38.0875կմ<sup>3</sup>:

Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի ծավալը, այդ թվում նաև ջրատարով ստորերկրյա հոսքը, 2021 թվականին կազմել է 157,447մլն մ<sup>3</sup>:

Սևանա լճից ջրի բաց թողումը 2021 թվականին սկսվել է մայիսի 25-ից և շարունակվել մինչև սեպտեմբերի 28-ը ներառյալ և ըստ Գեղամավան հիդրոլոգիական դիտակետի տվյալների լճից ջրի տարեկան գումարային բացթողումը կազմել է 227.651մլն.մ<sup>3</sup>:


2021 թվականի հունիսին և հոկտեմբերին Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի նմուշառումն իրականացվել է 16 դիտակետում: Ջրի նմուշները վերցվել են ափամերձ և կենտրոնական գոտիներից, ուղղաձիգ մակերևութային (մինչև 0.5 մ խորության), միջին և հատակամերձ շերտերից:

Գերմանիայի Շրջակա միջավայրի Հելմհոլցի կենտրոնի, ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն հետ համատեղ իրականացվող SEVAMOD2 հայ-գերմանական ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր ամիս իրականացվել է ջրի որակի մոնիթորինգ լճի 2 դիտակետում ուղաձիգ տարբեր խորություններում՝ մակերևութից մինչև հատակամերձ ջրաշերտեր, հետազոտվել է ջրի 14-ական փորձանմուշ:


Մեծ Սևանի ջրի որակը 2021 թվականին հիմնականում գնահատվել է 4-րդ («անբավարար» որակ) կամ 5-րդ դաս («վատ» որակ), իսկ Փոքր Սևանինը՝ 3-րդից 5-րդ դաս («միջակ»-«վատ» որակ), երկու դեպքում էլ պայմանավորված հիմնականում կենսածին նյութերով:

Սևանա լճի աղտոտման հավանական պատճառ են հանդիսանում նաև կոմունալ-կենցաղային կեղտաջրերի, ինչպես նաև գյուղատնտեսական հոսքաջրերի՝ առանց պատշաճ մակարդակով մաքրվելու արտահոսքերը Սևանի ՋԿՏ-ի գետեր կամ անմիջապես Սևանա լիճ: Ամբողջապես չմաքրված կեղտաջրերը իրենց հետ գետեր, իսկ այնուհետև լիճ են տանում ազոտի և ֆոսֆորի զգալի քանակություն:


Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ազոտի և ֆոսֆորի պարունակությունները ներկայացված են ստորև գրաֆիկական տեսքով.




Գծապատկեր 95. Սևանա լիճ թափվող գետերում ամունիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը




Գծապատկեր 96. Սևանա լիճ թափվող գետերում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր 97. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը




Գծապատկեր 98. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը




Գծապատկեր 99. Փոքր Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը






Գծապատկեր 100. Մեծ Սևանում ամռնի ժամանակի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր 101. Փոքր Սևանում նիտրատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր 102. Մեծ Սևանում նիտրատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը

**Աղյուսակ 15. Սևանա լճի ջրի որակը 2021թ.**

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
--------------------------------	----------------	---------------------------	--------------------	-------------------------	---------------------------

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս		
Սևան	Սևանա լիճ	Ծափաթաղ, կենտրոնական (մակերևութից) (115'-ՄՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԼԱԱ	3-րդ	4-րդ		
			Նիտրիտ իոն	4-րդ			
		Ծափաթաղ, կենտրոնական (7մ խորությունից) (115'-ՄՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ԼԱԱ	3-րդ	4-րդ		
			Նիտրիտ իոն	4-րդ			
		Ծափաթաղ, կենտրոնական (20մ խորությունից) (115'-ՄՄ)	ԹՔՊ, բոր, ԼԱԱ	3-րդ	5-րդ		
			Լուծված թթվածին, ամոնիում իոն	4-րդ			
			Նիտրիտ իոն	5-րդ			
		Սևան	Սևանա լիճ	Ծափաթաղ, կենտրոնական (30մ հորությունից) (115'-ՄՄ)	ԹՔՊ, բոր, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
					Լուծված թթվածին, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	4-րդ	
Մանգան	5-րդ						
Ծափաթաղ, ավաամերձ (մակերևութից) (115-ՄՄ)	ԹՔՊ, բոր, ԼԱԱ			3-րդ	4-րդ		
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն			4-րդ			
Ծափաթաղ, ավաամերձ (7մ խորությունից) (115-ՄՄ)	ԹՔՊ, բոր, ԼԱԱ			3-րդ	4-րդ		
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն			4-րդ			
Գիլի, կենտրոնական (մակերևութից) (118'-ՄՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր			3-րդ	4-րդ		
	Նիտրիտ իոն			4-րդ			
Գիլի, կենտրոնական (7մ խորությունից) (118'-ՄՄ)	ԹՔՊ, բոր, ԼԱԱ			3-րդ	4-րդ		
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն			4-րդ			
Գիլի, կենտրոնական	Բոր, ԼԱԱ			3-րդ	4-րդ		

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս		
		նական (20մ խորությունից) (118'-ՄՍ)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	4-րդ		
		Գիլի, ավաճերձ (մակերևույթից) (118'-ՄՍ)	ԹՔՊ, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ			
			Ամոնիում իոն	4-րդ			
		Գիլի, ավաճերձ (7մ խորությունից) (118'-ՄՍ)	ԹՔՊ, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ		
			Ամոնիում իոն	4-րդ			
		Արփա, կենտրոնական (մակերևույթից) (119'-ՄՍ)	Բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ		
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ			
		Սևան	Սևանա լիճ	Արփա, կենտրոնական (7մ խորությունից) (119'-ՄՍ)	Ամոնիում իոն, ՀԱԱ	3-րդ	4-րդ
					Նիտրիտ իոն	4-րդ	
				Արփա, կենտրոնական (20մ խորությունից) (119'-ՄՍ)	Ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	5-րդ
Ամոնիում իոն	4-րդ						
Նիտրիտ իոն	5-րդ						
Արփա, կենտրոնական (30մ խորությունից) (119'-ՄՍ)	Բոր, ՀԱԱ			3-րդ	4-րդ		
	Լուծված թթվածին, ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն			4-րդ			
Արփա, ավաճերձ (մակերևույթից) (119-ՄՍ)	Ամոնիում իոն, ՀԱԱ			3-րդ	4-րդ		
	Նիտրիտ իոն			4-րդ			
Արփա, ավաճերձ (7մ խորությունից) (119-ՄՍ)	Ամոնիում իոն			3-րդ	4-րդ		
	Նիտրիտ իոն	4-րդ					
Նորաստուգ, կենտրոնական	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ				

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս				
		(մակերևույթից) (124'-ՄՄ)	Նիտրիտ իոն	4-րդ	5-րդ				
		Նորատուգ, կենտրոնական (7մ խորությունից) (124'-ՄՄ)	Ամոնիում իոն, բոր, ՇԱԱ	3-րդ					
		Նորատուգ, կենտրոնական (30մ խորությունից) (124'-ՄՄ)	Նիտրիտ իոն	5-րդ	5-րդ				
			ԹՔՊ, ՇԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ					
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	4-րդ					
					Նիտրիտ իոն, մանգան	5-րդ	5-րդ		
					Նորատուգ, ափամերձ (մակերևույթից) (124-ՄՄ)	ԹՔՊ, նիտրիտ իոն, բոր, ՇԱԱ		3-րդ	5-րդ
					Ամոնիում իոն	5-րդ			
		Սևան	Սևանա լիճ	Նորատուգ, ափամերձ (7մ խորությունից) (124-ՄՄ)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՇԱԱ	3-րդ	4-րդ		
ԹՔՊ	4-րդ								
Այրիվանք, կենտրոնական (մակերևույթից) (126'-ՓՄ)	ԹՔՊ, նիտրիտ իոն, բոր, ՇԱԱ			3-րդ	4-րդ				
	Ամոնիում իոն			4-րդ					
Այրիվանք, կենտրոնական (7մ խորությունից) (126'-ՓՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, բոր, ՇԱԱ			3-րդ	4-րդ				
	Նիտրիտ իոն			4-րդ					
Այրիվանք, կենտրոնական (15մ խորությունից) (126'-ՓՄ)	Ամոնիում իոն, բոր, ՇԱԱ			3-րդ	4-րդ				
	Նիտրիտ իոն			4-րդ					
Այրիվանք, կենտրոնական (30մ խորությունից) (126'-ՓՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՇԱԱ			3-րդ	3-րդ				

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
		Այրիվանք, ավազներձ (մակերևույթից) (126-ՓՍ)	ԹՔՊ, բոր, ԼԱԱ	3-րդ	4-րդ
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
		Այրիվանք, ավազներձ (7մ խորությունից) (126-ՓՍ)	Նիտրիտ իոն, բոր, ԼԱԱ	3-րդ	4-րդ
			Ամոնիում իոն	4-րդ	
		Մողեղային, կենտրոնական (մակերևույթից) (127'-ՓՍ)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ԼԱԱ	3-րդ	3-րդ
Սևան	Սևանա լիճ	Մողեղային, կենտրոնական (7մ խորությունից) (127'-ՓՍ)	Ամոնիում իոն, ԼԱԱ	3-րդ	4-րդ
			Նիտրիտ իոն	4-րդ	
		Մողեղային, կենտրոնական (30մ խորությունից) (127'-ՓՍ)	Լուծված թթվածին, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ԼԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
		Մողեղային, ավազներձ (մակերևույթից) (127-ՓՍ)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ԼԱԱ	3-րդ	3-րդ
		Մողեղային, ավազներձ (7մ խորությունից) (127-ՓՍ)	ԹՔՊ, նիտրիտ իոն, բոր, ԼԱԱ	3-րդ	4-րդ
			Լուծված թթվածին, ամոնիում իոն	4-րդ	
		Գյունեյ, կենտրոնական (մակերևույթից) (130'-ՓՍ)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ԼԱԱ	3-րդ	3-րդ
		Գյունեյ, կենտրոնական	ԹՔՊ, նիտրիտ իոն, ԼԱԱ	3-րդ	4-րդ



Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս		
		(7մ խորությունից) (130'-ՓՄ)	Լուծված թթվածին, ամոնիում իոն	4-րդ	4-րդ		
		Գյունեյ, կենտրոնական (20մ խորությունից) (130'-ՓՄ)	Նիտրիտ իոն, բոր, ԸԱԱ	3-րդ			
			Ամոնիում իոն	4-րդ			
		Գյունեյ, կենտրոնական (30մ խորությունից) (130'-ՓՄ)	ԹՔՊ, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ		
			Ամոնիում իոն	4-րդ			
		Սևան	Սևանա լիճ	Գյունեյ, ավիամերձ (մակերևույթից) (130-ՍՍ)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	3-րդ	3-րդ
				Գյունեյ, ավիամերձ (7մ խորությունից) (130-ՍՍ)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ԸԱԱ	3-րդ	3-րդ
Շորժա, կենտրոնական (մակերևույթից) (131'-ՓՄ)	ԹՔՊ, երկաթ, ԸԱԱ			3-րդ	4-րդ		
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն			4-րդ			
Շորժա, կենտրոնական (7մ խորությունից) (131'-ՓՄ)	ԹՔՊ, ԸԱԱ			3-րդ	4-րդ		
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն			4-րդ			
Շորժա, կենտրոնական (30մ խորությունից) (131'-ՓՄ)	ԹՔՊ, ամոնիում իոն, ԸԱԱ			3-րդ	4-րդ		
	Նիտրիտ իոն			4-րդ			
Շորժա, ավիամերձ (մակերևույթից) (131'-ՓՄ)	ԸԱԱ			3-րդ	4-րդ		
	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն			4-րդ			

<i>Ջրավազանային կառավարման տարածք</i>	<i>Ջրային ռեսուրս</i>	<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դաս</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դաս</i>
		<i>Շորժա, ասփամերձ (7մ խորությունից) (131-ՓՄ)</i>	<i>ԹՔՊ, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
			<i>Ամռնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	


## Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Արարատյան ՋԿՏ-ը ներառում է Ագատի, Արփայի և Վեդիի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային կեղտաջրերը:


2021 թվականին Արարատյան ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 12 դիտակետում, որոնցից 16.7%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս և 50%-ում՝ 3-րդ դաս, 25%-ում՝ 4-րդ դաս, 8.3%-ում՝ 5-րդ դաս:

Նախորդ տարվա համեմատ 2021 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել, բացառությամբ Վեդի գետի՝ Արարատից ներքև դիտակետի, որտեղ ջրի որակը 3-րդ դասից դարձել է 5-րդ դաս, Արփա գետի՝ Եղեգնաձորից վերև և Արենիից ներքև դիտակետերի, որտեղ ջրի որակը 3-րդ դասից դարձել է 4-րդ դաս, Եղեգիս գետի՝ Շատինից ներքև դիտակետի, որտեղ ջրի որակը 3-րդ դասից դարձել է 4-րդ դաս:

**Արարատյան ՋԿՏ**



**Արարատյան ՋԿՏ թափվող վնասակար նյութեր, 2020թ.**



Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 23 դիտակետում, որից 10-ում՝ նաև որակի մոնիթորինգ:

2020 թվականին այս ՋԿՏ-ից ջրառը կազմել է 217.1 մլն մ<sup>3</sup>, որից 49%-ը բաժին է ընկնում մակերևութային ջրերին, 51%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ոռոգման (44.1%), ձկնաբուծության (43.7%), և խմելու (7.8%) նպատակներով:

### Մակերևութային ջրեր

#### Հիդրոլոգիական դիտարկումներ

Հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում, այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ագատի ջրամբար): Չորս հիդրոլոգիական դիտակետերի ջրի միջին տարեկան ելքերի վերաբերյալ տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացվում են.

**Աղյուսակ 16. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.**

Գետ	Դիտակետ	Միջին տարեկան ելքեր, մ <sup>3</sup> /վ		
		փաստացի	նորմա	%
Ագատ	Գառնի	2.80	4.72	59.3
Վեդի	Ուրցաձոր	1.35	1.64	82.5
Արփա	Ջերմուկ	2.86	5.21	55.0
Արփա	Արենի	11.5	14.4	79.9

### ***Մակերևութային ջրերի որակ***

Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Արարատ քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված երկաթով և կախության չոր նյութերով:

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև, Վայք քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Ջերմուկ քաղաքից վերև՝ պայմանավորված երկաթով, Վայք քաղաքից վերև՝ մոլիբդենով, մանգանով և երկաթով, Վայք քաղաքից ներքև՝ մոլիբդենով, երկաթով, բարիումով և ծարիրով: Եղեգնաձոր քաղաքից վերև և Արենի գյուղից ներքև հատվածներում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Դարբ գետի ջրի որակը ակունքում և գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). ակունքում՝ պայմանավորված մոլիբդենով, մանգանով, երկաթով և ալյումինով, գետաբերանում՝ մոլիբդենով, երկաթով, բարիումով և ծարիրով:

Հերհեր գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և երկաթով:

Եղեգիս գետի ջրի որակը Գետիկվանք գյուղից վերև գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Շատին գյուղից ներքև՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

### ***Ստորերկրյա ջրեր***

Արարտյան ՊԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 23 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: 10 դիտակետերից իրականացվել են նաև նմուշառումներ՝ ջրի որակի ուսումնասիրության նպատակով:

Բնադրյուններում ջրի բարձր ծախսերը նկատվում են 2021 թվականի հունիս-դեկտեմբեր, իսկ ցածրը՝ նոյեմբեր-փետրվար ամիսներին: Եղեգնաձոր քաղաքի N787 դիտակետում ջրի ծախսը նշված ժամանակահատվածներում տատանվում է 2.29 – 4.56լ/վ սահմաններում և կազմում է 49.7%: Ագարակաձոր գյուղի վարչական տարածքի N785 դիտակետում ջրի բարձր ծախսերը գրանցվել են հունվար-ապրիլ ամիսներին (0.14 – 0.16լ/վ), ինչը պայմանավորված է ոչ թե բնական, այլ տեխնածին պատճառներով: Նշանակալի տատանումներ են նկատվում նաև հրաբխային լեռնաշղթաների հիդրոերկրաբանական մարզի դիտակետերում:

Գառնի գյուղի վարչական տարածքի N2046 դիտակետում ջրի ծախսը 2021 թվականին տատանվել է 0.09 – 1.1լ/վ տիրույթում՝ կազմելով շուրջ 92%, իսկ N2047 դիտակետում ջրի ծախսը տատանվել է 0.12 – 0.29լ/վ տիրույթում և կազմում է 59%:

Մեղմ տատանումներ են նկատվում Ջերմուկ քաղաքի վարչական տարածքի N2048 դիտակետում: Այստեղ ջրի ծախսը տատանվում է 12.35 – 20.22լ/վ սահմաններում՝ կազմելով 39%:


Բազմամյա տարիների շարքում հարավային ծալքավոր լեռնաշղթաների հիդրոերկրաբանական մարզում միջին տարեկան ծախսերը փոփոխվում են սինուսիդի տեսքով: N787 դիտակետում ջրի բարձր ծախսը (4.5լ/վ) նկատվել է 2014թ, իսկ ցածրը՝ (3.52լ/վ)՝ 2016 և 2021 թվականներին: Համանման փոփոխություններ են նկատվում հրաբխային լեռնաշղթաների հիդրոերկրաբանական մարզում: Ջերմուկ քաղաքի N2048 դիտակետում նկատվում է ջրի ծախսի անընդհատ աճ 10.0լ/վ (2015թ) մինչև 16.0լ/վ (2020թ), ինչը պայմանավորված է տեխնածին պատճառներով: Այդ ժամանակահատվածում

ջրթափում ընդգրկվել են նոր ցրված ելքերով ջրաղբյուրներ: 2021 թվականին դիտակետի միջին ծախսը կազմել է 15.36լ/վ:


Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի մակարդակի և ծախսի նշանակալի փոփոխություններ են նկատվում Արարատյան գոգավորության հարավ-արևելյան մասի դիտակետերում: Համաձայն 2021 թվականի դիտարկումների՝ N2062 (ք.Արտաշատ) և N2063 (Դալար) դիտակետերում (շատրվանող հորատանցքեր) միջին ամսական ծախսերի ցածր արժեքներ նկատվում են ոռոգման շրջանում համապատասխանաբար 0.12լ/վ-ից մինչև 0.31լ/վ և 0.13լ/վ-ից մինչև 0.95լ/վ: Ոռոգման շրջանից հետո դիտվող նախնական ծախսերը վերականգնվել են:

Ոռոգման շրջանում ստորերկրյա ջրերի մակարդակի տատանումները աննշան են, Լուսառատ (N2074), Եղեգնավան (N2065) և Արարատ (N2076) բնակավայրերի դիտակետերում: Արարատ քաղաքից դեպի հարավ-արևելք ոռոգումը կատարվում է նաև գետային հոսքով, իսկ հորատանցքերով կատարվող ջրառը համեմատաբար սահմանափակ է:

Արարատյան ՋԿՏ-ի 10 դիտակետում իրականացվել են նմուշառումներ, ջրի որակի ուսումնասիրության նպատակով: Արարատի մարզի Սուրենավան գյուղի N2067 շատրվանող հորատանցքում հանքայնացումը գերազանցել է ՍԹԿ-ն:



Գծապատկեր 103. Արարատյան ՋԿՏ-ի բնաղբյուրների ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 104. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Շատրվանոցի հորատանցքեր  
Մակարդակ, մ


Արարատյան ՋԿՏ



Գծապատկեր 105. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանոցի հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները

Շատրվանոցի հորատանցքեր  
Ծախս, լ/վ


Արարատյան ՋԿՏ




Գծապատկեր 106. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանոցի հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները

Գրունտային ջրհորներ  
Մակարդակ, մ


Արարատյան ՋԿՏ



Գծապատկեր 107. Արարատյան ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում ջրի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 108. Արարատյան ՋԿՏ-ի բնադրյուններում հանքայնացման փոփոխությունը



Գծապատկեր 109. Արարատյան ՋԿՏ-ի բնադրյուններում նիտրատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը

**ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2021 թվական**




0 3 6 12 18 24 կմ

## Հարավային ջրավազանային կառավարման տարածք


Հարավային ՋԿՏ-ը ներառում է Մեղրիի, Ողջիի, Գեղիի, Միսիանի, Որոտանի և Վարարակի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային և արդյունաբերական կեղտաջրերը:

2021 թվականին Հարավային ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 21 դիտակետում, որոնցից 23.8%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 28.6%-ում՝ 3-րդ դաս, 19%-ում՝ 4-րդ դաս և 28.6%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2021 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել, բացառությամբ Մեղրի գետի՝ Մեղրիից վերև դիտակետի, որտեղ ջրի որակը 3-րդից դարձել է 4-րդ դաս, Աճանան (Նորաշենիկ) գետի՝ Աճանանից վերև դիտակետի, որտեղ ջրի որակը 3-րդից դարձել է 4-րդ, Որոտան գետի՝ Միսիանից ներքև և Տաթև ՀԷԿ-ից ներքև դիտակետերի, որտեղ ջրի որակը 4-րդ դասից դարձել է 3-րդ դաս, Միսիան գետի՝ Արևիսից վերև դիտակետի, որտեղ ջրի որակը 3-րդ դասից դարձել է 2-րդ դաս:

Հարավային ՋԿՏ



Հարավային ՋԿՏ թափվող վնասկար նյութեր, 2020թ.



Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 7 դիտակետում, որից 4-ում՝ նաև որակի մոնիթորինգ:

2020 թվականին այս ՋԿՏ-ից ջրառը կազմել է 130.3 մլն մ<sup>3</sup>, որից 88%-ը բաժին է ընկնում մակերևութային, իսկ 12%-ը՝ ստորերկրյա ջրերին: Զրոգտագործումն իրականացվել է հիմնականում արտադրական (60.0%), ձկնաբուծության (20.2%) և ոռոգման (14.5%) նպատակներով:

### Մակերևութային ջրեր

#### Հիդրոլոգիական դիտարկումներ

Հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 10 դիտակետում: Երեք հիդրոլոգիական դիտակետերի ջրի միջին տարեկան ելքերի վերաբերյալ տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացվում են.

Աղյուսակ 17. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին տարեկան ելքեր, մ <sup>3</sup> /վ		
		փաստացի	նորմ	%
Մեղրիգետ	Մեղրի	3.51	2.95	119
Ողջի	Կապան	7.93	6.65	119
Որոտան	Գորայք	4.70	3.84	122

**Մակերևութային ջրերի որակ**

Մեղրի գետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)։ Մեղրի քաղաքից վերև՝ պայմանավորված մանգանով, գետաբերանում՝ մանգանով, մոլիբդենով և ալյումինով։

Կարձևան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի 5-օրյա կենսաբանական պահանջարկով, թթվածնի քիմիական պահանջարկով, ամոնիում իոնով, մոլիբդենով, վանադիումով, նատրիումով, սուլֆատ իոնով և կախութային չոր նյութերով։

Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը Աճանան գյուղից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ալյումինով և վանադիումով, գետաբերանում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված, մոլիբդենով, մանգանով, վանադիումով, նիտրիտ և սուլֆատ իոններով։


Գեղի գետի ջրի որակը Աջաբաջ գյուղից վերև գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով։

Որոտան գետի ջրի որակը վերին հոսանքում և Գորայք գյուղից վերև գնահատվել է՝ «լավ» (2-րդ դաս), Միսիան քաղաքից վերև։ Միսիան քաղաքից ներքև և Տաթև գյուղի ՀԷԿ-ից ներքև ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։ Միսիան քաղաքից վերև՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, մոլիբդենով, մանգանով և վանադիումով, Միսիան քաղաքից ներքև՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով, մանգանով, մոլիբդենով, վանադիումով, երկաթով, բարիումով և ընդհանուր ֆոսֆորով, Տաթև գյուղի ՀԷԿ-ից ներքև՝ մոլիբդենով, մանգանով, երկաթով և բարիումով։

Միսիան գետի ջրի որակը Արևիս գյուղից վերև գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանում՝ «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով և մանգանով։




Վարարակ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև և ներքև ընկած հատվածներում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)։ Գորիս քաղաքից վերև՝ պայմանավորված մանգանով, կոբալտով, երկաթով և կախութային չոր նյութերով, Գորիս քաղաքից ներքև՝ ամոնիում և ֆոսֆատ իոններով։


Որոտան-Արփա ջրատարի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, մոլիբդենով, երկաթով, բարիումով և սուլֆատ իոնով։



Գծապատկեր 110. Կարձևան գետի ջրում պղնձի կոնցենտրացիայի փոփոխությունը







Գծապատկեր 114. Վարարակ գետի ջրում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը

**Ստորերկրյա ջրեր**




Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 7 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը, իսկ 4 դիտակետերից իրականացվել են նաև նմուշառումներ՝ ջրի որակի ուսումնասիրության նպատակով:

Գորհայքի N529 դիտակետում 2021թ. ջրի ծախսը տատանվել է 1.48 - 2.23լ/վ սահմաններում՝ կազմելով շուրջ 33%, իսկ N537 (Սպանդարյան) դիտակետում 1.9 – 2.32լ/վ սահմաններում՝ կազմելով շուրջ 18%:


Գորիս քաղաքի վարչական տարածքի N1399 դիտակետում, որտեղ ջրերի ձևավորումը կատարվում է կարբոնատային ապարներում, ջրի ծախսը տատանվում է 3.33 – 4.14լ/վ սահմաններում՝ կազմելով շուրջ 19.5%: Աննշան տատանումներ են նկատվում ջրերի քիմիական կազմում: Ստորերկրյա ջրերի ընդհանուր հանքայնացումը 2021թ. N529 դիտակետում տատանվել է 0.090 – 0.091գ/լ, իսկ ընդհանուր կոշտությունը՝ 0.82 մգ.համ/լ սահմաններում: Համանման պատկեր է նկատվում N537 դիտակետում (Սպանդարյան), որտեղ ընդհանուր հանքայնացումը տատանվել է 0.204գ/լ, իսկ ընդհանուր կոշտությունը՝ 1.97 մգ.համ/լ սահմաններում:

Գորհայքի N529 դիտակետում 2021թ. ջրի ծախսը տատանվել է 1.48 - 2.23լ/վ սահմաններում՝ կազմելով շուրջ 33%, N537 (Սպանդարյան) դիտակետում նշված տատանումները կատարվել են 1.9 – 2.32լ/վ սահմաններում՝ կազմելով շուրջ 18%:

Գորիս քաղաքի N1399 դիտակետում, ջրի միջին տարեկան ծախսերը տատանվում են շուրջ 19.5% սահմաններում: Աննշան տատանումներ են նկատվում ջրերի ջերմաստիճաններում և քիմիական կազմում:



ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2021 թվական



**ՀՀ ջրամբարների ջրի որակը 2021 թվականին.**

Հինգ ջրամբարում (Ախուրյան, Արփի լիճ, Ապարան, Ազատ և Մարմարիկ) իրականացվում են հիդրոլոգիական դիտարկումներ և ջրի որակի մոնիթորինգ, Մարմարիկի ջրամբարում իրականացվում են միայն հիդրոլոգիական դիտարկումներ, իսկ Կեչուտի ջրամբարում և Երևանյան լճում՝ միայն ջրի որակի մոնիթորինգ:

**Հիդրոլոգիական դիտարկումներ**

2021 թվականի ընթացքում ջրամբարների լցվածությունների մեծությունները տարվա վերջին օրվա դրությամբ ներկայացված են Աղյուսակ 19-ում:

**Աղյուսակ 18. Ջրամբարների ջրալցվածությունը.**

Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ընդհանուր ծավալը, մլն.կտր.մ	Փաստացի լցվածությունը, դեկտեմբերի 31-ի դրությամբ	
		ընդամենը մլն.կտր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %
Ախուրյան	525	75.43	14
Արփի լիճ	105	18.8	18
Ազատ	70.0	20.22	29
Մարմարիկ	24.0	1.84	8
Ապարան	91.0	13.71	15

**Ջրամբարների ջրի որակ**


Ապարանի, Ազատի և Կեչուտի ջրամբարների ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Արփի լիճ և Ախուրյանի ջրամբարների ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Արփի լիճ ջրամբարի ջրի «միջակ» որակը պայմանավորված է թթվածնի քիմիական պահանջարկով, Ախուրյանի ջրամբարինը՝ ամոնիում իոնով, Երևանյան լիճ ջրամբարի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով:

**Աղյուսակ 19. Ջրամբարների ջրի որակը 2021 թվականին**

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Արփի լճի ջրամբար	ամբարտակի մոտ (109)	ԹՔՊ	3-րդ	3-րդ
Ախուրյանի ջրամբար	ամբարտակի մոտ (110)	Ամոնիում իոն	3-րդ	3-րդ
Ապարանի ջրամբար	ամբարտակի մոտ (111)	-	2-րդ	2-րդ
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	ԹՔՊ, ԸՍԱ	3-րդ	5-րդ
		Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
		Ամոնիում իոն	5-րդ	
Ազատի ջրամբար	ամբարտակի մոտ (113)	-	2-րդ	2-րդ
Կեչուտի ջրամբար	ամբարտակի մոտ (114)	-	2-րդ	2-րդ

ՀՀ ջրամբարների ջրի որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերի (ՀՀ կառավարության 2011թ.-ի հունվարի 27-ի N 75-Ն որոշման հավելված N2):






Գծապատկեր 118. Ջրամբարներում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը

## Արաքս գետ

Արաքս գետի 7 դիտակետից վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, գերազանցվել են թթվածնի քիմիական պահանջարկի, ամոնիում, նիտրիտ, սուլֆատ իոնների, ցինկի, պղնձի, քրոմի, նիկելի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի ՄԹԿ-ները (Աղյուսակ 6):

Արաքս գետի 3 դիտակետում ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին իրականացվել են հատակային նստվածքների ուսումնասիրություններ: Հատակային նստվածքներում որոշված ցուցանիշների մի մասը բերված է աղյուսակ 7-ում:

«ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ»  
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԵՏԻ ՋՐԻ  
ՈՐԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ



- ՊԱՅՄԱՆԱՇԱՆՆԵՐ**  
Մակերևութային ջրերի  
նմուշառման դիտակետեր
- ▲ 22 տարածքից
  - ▲ Իհձ տարածքից
  - Քաղաքներ
  - Գյուղեր
  - Գետային ցանց
  - 22 պետական սահման
  - Լճեր և ջրամբարներ

Աղյուսակ 20. Արաքս գետի ջրում որոշված ցուցանիշների տարեկան միջին կոնցենտրացիայի գերազանցումը ՍԹԿ-ից 2021 թվականին.

	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)												
	Թթվածնի քիմիական պահանջարկ, ՍԹԿ=30 մգ/լ	Սևնիքում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՍԹԿ=0,024 մգN/լ	Սուլֆատ իոն, ՍԹԿ=100 մգ/լ	Ցինկ, ՍԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Նիկել, ՍԹԿ=0,01 մգ/լ	Սանգան, ՍԹԿ=0,01 մգ/լ	Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՍԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՍԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ
Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)													
Հուշակերտ գյուղից 0.9 կմ ներքև (25)	-	1.3	-	-	1.8	10.2	10.0	2.5	13.4	10.8	2.6	30.7	13.0
Հրազդան գետի թափման կետից վերև (26)	-	4.3	4.2	1.3	2.3	5.9	6.9	-	7.4	16.5	1.7	15.9	1.3
Հրազդան գետի թափման կետից ներքև (27)	-	4.8	6.2	1.3	1.4	5.8	6.2	-	6.9	16.5	1.7	15.9	-
Արարատ քաղաքից 0.5 կմ ներքև (28)	-	3.4	7.1	1.4	1.3	5.5	7.9	-	7.5	16.3	2.0	19.5	-
Ազարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	1.2	1.7	2.0	2.3	-	9.2	7.3	-	7.4	16.9	2.4	19.8	2.6
Ազարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	1.3	1.4	2.0	2.3	-	86.3	6.8	-	7.6	17.5	2.7	18.5	2.9
Մեղրի գետի թափման կետից ներքև (AMS-3)	-	1.8	1.9	2.4	2.1	72.1	7.5	-	15.8	21.2	7.0	35.6	2.6

Աղյուսակ 21. Արաքս գետի հատակային նստվածքների մոնիթորինգի արդյունքները 2021 թվականին.

Կոնցենտրացիա, գ/կգ	Ագարակ քաղաքից 2 կմ հարավ (29) AMS-1)						Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք (30) AMS-2)		Մեղրի գետի թափման կետից ներքև (AMS-3)					
	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Մայիս	Հունիս	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր
Այլումին	4.3116	38.6772	9.8934	14.6020	2.4941	3.1704	17.0928	28.8415	10.4014	50.5767	24.5696	7.9153	4.2742	48.8004
Երկաթ	13.4357	23.5259	31.1836	21.9034	13.6432	16.6353	14.2060	54.9026	14.4303	41.4705	47.5058	13.2998	31.7219	27.5371
Մանգան	0.8389	1.1040	0.9501	1.2193	0.6695	1.0480	1.0417	1.2632	0.3407	0.5578	1.1026	0.4334	0.3117	0.5204
Նիկել	0.1618	0.1921	0.2142	0.2238	0.1080	0.1584	0.1951	0.3053	0.0432	0.0489	0.2448	0.0563	0.0358	0.0701
Պղինձ	0.0392	0.0635	0.0521	0.0558	0.0374	0.0593	0.1563	0.1442	0.7846	0.9688	0.2758	1.0605	1.2403	0.5693
Արսեն	0.0106	0.0217	0.0168	0.0142	0.0086	0.0125	0.0230	0.0228	0.0067	0.0159	0.0208	0.0086	0.0151	0.0144
Մոլիբդեն	0.0009	0.0008	0.0006	0.0010	0.0014	0.0016	0.0049	0.0029	0.0377	0.0405	0.0077	0.0435	0.0588	0.0355

## Հիդրոկենսաբանական մոնիթորինգ

2021 թվականի հուլիսին Արարատյան ՋԿՏ-ի՝ Արփայի և Հարավային ՋԿՏ-ի՝ Որոտանի գետավազաններում իրականացվել է հիդրոկենսաբանական (միայն ըստ մակրոանողնաշարավորների) մոնիթորինգ, որի արդյունքների համաձայն Արփա, Դարբ, Հերիեր և Եղեգիս գետերի նվազագույն անթրոպոգեն ազդեցություն ունեցող հատվածներում, որոնք դիտարկվել են որպես հղումային դիտակետեր (անադարտ վիճակ) ջրի որակը «գերազանց» է: Արփա գետի ջրի որակը Արենի քաղաքից հետո՝ հոսանքով ներքև, գնահատվել է «միջակ»:

Ջրի որակն ըստ հիդրոկենսաբանական ցուցանիշների գնահատվել է՝ հաշվի առնելով մակրոանողնաշարավորների տեսակների բազմազանությունը, կենդանիների տեսակների քանակները և տեսակների զգայունությունը աղտոտիչների նկատմամբ:

Ջրի որակն ըստ հիդրոկենսաբանական ցուցանիշների գնահատվել է՝ հաշվի առնելով մակրոանողնաշարավորների տեսակների բազմազանությունը, կենդանիների տեսակների քանակները և տեսակների զգայունությունը աղտոտիչների նկատմամբ:

**1-ին դաս («գերազանց» որակ)**՝ նշանակում է տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը, ամբողջովին կամ համարյա ամբողջովին համապատասխանում են անադարտ վիճակին:

**2-րդ դաս («լավ» որակ)**՝ նշանակում է անադարտ վիճակի հետ համեմատությամբ, տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը փոփոխվում են աննշան:

**3-րդ դաս («միջակ» որակ)**՝ նշանակում է տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը, չափավոր շեղվում են անադարտ վիճակից:

**4-րդ դաս («անբավարար» որակ)**՝ նշանակում է տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը բավականին շեղվում են անադարտ վիճակից:

**5-րդ դաս («վատ» որակ)**՝ նշանակում է տաքսոնոմիական կազմը և բազմազանությունը լիովին շեղվում են անադարտ վիճակից:

**Աղյուսակ 22. Արփայի և Որոտանի գետավազաններում քիմիական և հիդրոկենսաբանական մոնիթորինգների արդյունքները.**

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի քիմիական որակի դաս	Ջրի հիդրոկենսաբանական որակի դաս
Դարբ	Ակունք (348)	3-րդ	1-ին
	Գետաբերան (349)	3-րդ	2-րդ
Եղեգիս	գյ. Գետիկվանքից վերև (352)	2-րդ	1-ին
Եղեգիս	գյ. Շատինից վերև (88)	4-րդ	2-րդ
Հերիեր	Ակունք (350)	-	2-րդ
	Գետաբերան (351)	3-րդ	1-ին
Արփա	0.5 կմ ք. Ջերմուկից վերև (83)	3-րդ	1-ին
	0.5 կմ ք. Վայքից ներքև (85)	3-րդ	2-րդ
	0.5 կմ ք. Եղեգնաձորից վերև (86)	4-րդ	2-րդ



<i>Ջրային օբյեկտ</i>	<i>Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)</i>	<i>Ջրի քիմիական որակի դաս</i>	<i>Ջրի հիդրոկենսաբանական որակի դաս</i>
<i>Արփա</i>	<i>0.5 կմ գյ. Արենիից ներքև (87)</i>	<i>4-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Որոտան</i>	<i>Վերին հոսանք (354)</i>	<i>2-րդ</i>	<i>2-րդ</i>

### **Տվյալների ամփոփում**

2020 թվականին ՀՀ-ում ջրառը կազմել է 2829.8 մլն. մ<sup>3</sup>, ջրօգտագործումը՝ 2176.3 մլն. մ<sup>3</sup>, որի արդյունքում արտահոսքում վնասակար նյութերի գումարային քանակը կազմել է 81442.4 տ:

Հանքարդյունաբերական գործունեության արդյունքում ջրերի վրա աղտոտման ազդեցություն հիմնականում թողնում են հետևյալ արդյունաբերական կազմակերպությունները՝

<b>Կազմակերպություն</b>
<i>«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ</i>
<i>«Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ</i>
<i>«Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ</i>

Նշված կազմակերպությունների գործունեության արդյունքում հիմնականում աղտոտվում են Ախթալա, Դեբեդ, Ողջի, Աճանան (Նորաշենիկ), Կարճևան գետերը, և մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն այդ գետերի ջրի որակը 2020 և 2021 թվականներին գնահատվել են «վատ»:

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

2021թ. իրականացվել է հետազոտական մոնիթորինգ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի Դեբեդ գետի ավազանում և Հարավային ջրավազանային կառավարման տարածքի Որոտան գետի ավազանում: Մոնիթորինգ է իրականացվել Փամբակ, Չիչխան, Լեռնաջուր, Ալարեքս, Դեբեդ, Նահատակ, Ձորագետ, Սևաբերդ, Քաթնաղբյուր, Ջուխտակ, Ախթալա և Լալվար գետերում: Համաձայն այդ գետերում իրականացված մոնիթորինգային արդյունքների Փամբակ գետի ջրի որակը Ձորագետ կայարանի մոտ հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ և ֆոսֆատ իոններով:

Չիչխան գետի ջրի որակը Շիրակամուտ գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Լեռնաջուր գետի ջրի որակը Հալավար գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով:

Ալարեքս գետի ջրի որակը Դեբեդ գետից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Դեբեդ գետի ջրի որակը Ալավերդի քաղաքից ներքև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված կախության չոր նյութերով: Նահատակ գետի թափման կետից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Շնող գետի ջրի որակը Թեղուտ գյուղից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով:

Նահատակ գետի ջրի որակը Մեծ Այրում գյուղից վերև հատվածում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված կախության չոր նյութերով: Նահատակի պոչամբարից ներքև հատվածում գետի ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված նիտրիտ, սուլֆատ իոններով և մոլիբդենով:

Ձորագետ գետի ջրի որակը Կաթնառատ գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Սևաբերդ գետի ջրի որակը Նորամուտ գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Կաթնաղբյուր գետի ջրի որակը Ուրասար գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Արմանիս գյուղի մոտ հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, մանգանով և կոբալտով:

Ջուխտակ գետի ջրի որակը Մարց գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Ախթալա գետի ջրի որակը Բենդիկ գյուղից վերև հատվածում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով և կալցիումով:

Լալվար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ցինկով, պղնձով, կադմիումով, մանգանով, կոբալտով, երկաթով, ալյումինով, սուլֆատ իոնով և կախության չոր նյութերով:

Հետազոտական մոնիթորինգի արդյունքները կցվում են ստորև.

Աղյուսակ 23. Հետազոտական մոնիթորինգի արդյունքները 2021 թվական

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս	
Հյուսիսային	Փամբակ	Ձորագետ կայարան (362)	Նիտրատ իոն, մոլիբդեն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, ԿՉՆ	3-րդ	4-րդ	
			Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	4-րդ		
	Չիչխան	գյ. Շիրակա-մուտից վերև (359)	-	2-րդ	2-րդ	
	Լեռնաջուր	գյ. Հալավարից վերև (360)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ	
	Ալարեքս (Չանաղջի)	Դեբեդ գետից վերև(361)	-	2-րդ	2-րդ	
	Դեբեդ	Նահատակ գետի թափման կետից ներքև (370)	ք. Ալավերդիից ներքև (369)	ԿՉՆ	3-րդ	3-րդ
			Ֆոսֆատ իոն, պղինձ, սուլֆատ իոն	3-րդ	5-րդ	
			ԿՉՆ Մոլիբդեն	4-րդ 5-րդ		
	Շնող	Գյ. Թեղուտից վերև (345)	Մոլիբդեն	4-րդ	4-րդ	
	Նահատակ	Նահատակի պոչամբարից ներքև (373)	Նահատակի պոչամբարից ներքև (372)	ԹՔՊ, ամոնիում իոն, մոլիբդեն, երկաթ, ալյումին	3-րդ	4-րդ
				ԿՉՆ	4-րդ	
				Ամոնիում իոն, նիտրատ իոն, մանգան, ալյումին, ծարիր, ԸԱԱ, ԸԼԱ	3-րդ	5-րդ
	ԿՉՆ	4-րդ				
	Նիտրիտ իոն, մոլիբդեն, սուլֆատ իոն	5-րդ				
	Ձորագետ	գյ. Կաթնառատից վերև (363)	-	2-րդ	2-րդ	
Սևաբերդ	գյ. Նորամուտից վերև (364)	-	2-րդ	2-րդ		
Կաթնաղբյուր (Չքնաղ)	գյ. Արմանիս (366)	գյ. Ուրասարից վերև (365)	-	2-րդ	2-րդ	
		Ալյումին	3-րդ	5-րդ		
Յինկ, մանգան, կոբալտ	5-րդ					

<i>Ջրավազանային կառավարման տարածք</i>	<i>Ջրային օբյեկտ</i>	<i>Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դաս</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դաս</i>
<i>Հյուսիսային</i>	<i>Ջուխտակ</i>	<i>գյ. Մարցից վերև (367)</i>	-	<i>2-րդ</i>	<i>2-րդ</i>
	<i>Ախթալա</i>	<i>գյ. Բենդիկից վերև (371)</i>	<i>Ամոնիում իոն, կալցիում</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
	<i>Լավվար</i>	<i>Գետաբերան (368)</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիկել, կալցիում</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
			<i>Ցինկ, պղինձ, կադմիում, մանգան, կոբալտ, երկաթ, ալյումին, սուլֆատ իոն, ԿՉՆ</i>	<i>5-րդ</i>	



## ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

### Ընդհանուր տեղեկություններ

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝

- մետաղաձուլական գործարանները,
- արդյունաբերական և կենցաղային թափոնները,
- ժամանակակից գյուղատնտեսությունը,
- տրանսպորտը:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Այնուհետև դրանց մի մասը, անցնելով ջրային միջավայր, կլանվում է բույսերի կողմից և հայտնվում սննդային շղթայում: Հողի արդյունաբերական աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ մետաղաձուլական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները: Նման աղտոտումները կարող են առաջացնել հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ, վանադիում և այլն) և ցիանական միացություններով:

Հողի աղտոտման աղբյուրներից մեկը մթնոլորտն է: Մթնոլորտի վնասակար նյութերը նստում են հողի մակերեսին, թափանցում են գրունտային ջրերի մեջ, իսկ դրանց մի մասն էլ փոշու ձևով վերադառնում է մթնոլորտ:

Մարդու և կենդանիների առողջության վրա բացասաբար են ազդում պարարտանյութերի բոլոր խմբերը, մասնավորապես քլոր պարունակող և ֆոսֆորական պարարտանյութերը:

Ծանր մետաղների կուտակումը հողում կատարվում է ավելի արագ տեմպերով, քան հեռացումն ու չեզոքացումը, որը տևում է հարյուրավոր, նույնիսկ հազարավոր տարիներ: Գյուղատնտեսական աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ հանքային պարարտանյութերը, թունաքիմիկատները, անասնապահական համալիրները: Հանքային պարարտանյութերի կանոնների խախտման դեպքում մեծանում է հողի թթվայնությունը, փոխվում է հողային օգտագործման օրգանիզմների տեսակային կազմը, խախտվում է նյութերի շրջապտույտը, քայքայվում է հողի կառուցվածքը:

### Հիմնական աղտոտիչները և դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա

Հողային ծածկույթի վտանգավոր աղտոտիչներ են համարվում ծանր մետաղները: Ըստ վտանգավորության դասերի ծանր մետաղները բաժանվում են 3 դասի.

**I դաս** – արսեն, ցինկ, կապար

**II դաս** – պղինձ, քրոմ, նիկել, կոբալտ, ծարիր, քրոմ

**III դաս** – մանգան, վանադիում

**Արսենը** հանդիսանում է առաջին աստիճանի վտանգավոր տարր, որը խիստ վնասակար է շրջակա միջավայրի և մարդու առողջության համար: Արսենի միացությունները ևս վտանգավոր են: Այս տարրը կարող է կուտակվել մարդու վահանաձև գեղձում և առաջացնել էնդեմիկ գոր: Արսենը թունավոր է նույնիսկ փոքր չափաբաժնով: Արսենի առկայությունն օրգանիզմում կարող է առաջացնել մի շարք հիվանդություններ՝ մաշկային ախտահարում, դիաբետ, սրտանոթային պաթոլոգիա և ուռուցք:

**Ցինկը** առաջին աստիճանի վտանգավորության տարր է: Ցինկի բարձր կոնցենտրացիաները բույսերում վտանգավոր են՝ հատկապես դրանցով սնվող

կենդանիների համար (բրդաթափություն, կաղություն, նյութափոխության թուլացում, անեմիա):

**Կապարը** համարվում է առաջին աստիճանի վտանգավորության տարր: Կապարի բարձր պարունակությունը կարող է նկատվել արմատավոր բույսերում և այլ բուսական ծագման մթերքներում, որոնք աճում են արտադրական տարածքների հարևանությամբ տեղակայված հողատարածքներում և ճանապարհների եզրերին: Կապարի բարձր կոնցենտրացիաները կարող են առաջանալ հանքարդյունաբերությունից, էլեկտրակայանների աշխատանքից, գազով աշխատող տրանսպորտից: Կապարային թունավորումն առաջացնում է ազդեցիկություն, թերզարգացվածություն, ցրվածություն, գերակտիվություն, վարքագծի փոփոխություններ, լսողության նվազեցում:

**Պղինձը** և **նիկելը** հանդիսանում են երկրորդ աստիճանի վտանգավորության տարրեր, որոնք մարդու օրգանիզմի նորմալ գործունեության համար անհրաժեշտ միկրոտարրեր են: Սակայն այս մետաղների գերնորմտիվային պարունակությունը սննդի մեջ հանգեցնում է օրգանիզմի գործառույթների, այդ թվում նաև վերարտադրության և ժառանգականության խախտմանը:

**Քրոմը** երկրորդ աստիճանի վտանգավորության տարր է: Քրոմի պարունակության գերազանցումը հողում վատթարացնում է օրգանական նյութերի նիտրատացումը և կատարվում է քրոմի կուտակում բույսերում: Հողում քրոմի կոնցենտրացիայի նույնիսկ քիչ ավելացման դեպքում այն կարող է ունենալ խթանիչ ազդեցություն բույսերի աճի և բերքատվության բարձրացման վրա:

**Մանգանը** երրորդ աստիճանի վտանգավորության տարր է: Այն կարող է կուտակվել հողում, լճերում և ճահիճներում: Այս տարրը շատ արագ կլանվում և տարածվում է նաև բույսերում, որի բարձր կոնցենտրացիան նպաստում է ածխաջրածնային, սպիտակուցային և ֆոսֆատային նյութափոխանակության խախտմանը: Այն բացասաբար է ազդում հատկապես հացահատիկի գեներատիվ օրգանների ձևավորման, բեղմնավորման և աճի վրա, ինչը հանգեցնում է այդ բույսի կենսագործունեության ընկճմանը և ոչնչացմանը: Մանգանի կուտակումները մարդու օրգանիզմում առաջին հերթին անդրադառնում է կենտրոնական նյարդային համակարգի գործունեության վրա (դա արտահայտվում է հոգնածությամբ, քնկոտությամբ և հիշողության վատացմամբ), ախտահարում է թոքերը, սրտանոթային և լյարդալեղային համակարգերը, առաջացնում է ավերգիկ և մուտագեն ազդեցություն:

**Վանադիումը** երրորդ աստիճանի վտանգավորության տարր է: Վանադիումի կուտակումը հողում կարող է հանգեցնել բույսերի բերքատվության նվազեցմանը, իսկ կուտակումները մարդու օրգանիզմում՝ առաջացնել որովայնի հատվածում տհաճ զգացողություններ, փորլուծություն, սրտխառնոց և ստամոքսի խանգարումներ, ինչպես նաև մաշկային հիվանդություններ, կանաչավուն լեզու, էներգիայի կորուստ և նյարդային համակարգի խնդիրներ:

### **Հողի որակի նորմեր**


Հողերի որակի գիտահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն (Հավելված 3):

### **Տվյալների ամփոփում**



2021 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռի, Վայոց ձոր, Սյունիք, Շիրակ և Արմավիր մարզերում, ինչպես նաև՝ Երևան քաղաքում:

Ուսումնասիրությունների արդյունքների համաձայն Շիրակի մարզի ուսումնասիրված հողերում ՍԹԿ-ները գերազանցում են վանադիումի պարունակությունը 1.1-2.5 անգամ, քրոմիը՝ 1.7-54.0 անգամ, նիկելին՝ 6.0-37.8 անգամ, պղնձին՝ 7.7-24.3 անգամ, ցինկին՝ 2.2-8.3 անգամ, արսենին՝ 4.0-21.0 անգամ և կապարին՝ 1.7 անգամ:

**Շիրակի մարզի հողային ծածկություն մետաղների կոնցենտրացիոն բաշխվածությունը 2021 թվականին**





Լոռու մարզի ուսումնասիրված հողերում ՍԹԿ-ները գերազանցում են վանադիումի պարունակությունը՝ 1.1-8.9 անգամ, քրոմի պարունակությունը՝ 1.7-29.0 անգամ, նիկելի պարունակությունը՝ 2.5-23.0 անգամ, պղնձի պարունակությունը՝ 9.0-351.7 անգամ, ցինկի պարունակությունը՝ 3.0-52.7 անգամ, արսենի պարունակությունը՝ 5.0-67.0 անգամ և կապարի պարունակությունը՝ 1.1-13.7 անգամ:



Գծապատկեր 119. Լոռու մարզի հողերում մետաղների կոնցենտրացիաները



Վայոց ձորի մարզի ուսումնասիրված հողերում ՍԹԿ-ները գերազանցում են վանադիումի պարունակությունը՝ 1.1-2.4 անգամ, քրոմինը՝ 1.7-23.3 անգամ, նիկելինը՝ 3.0-20.5 անգամ, պղնձինը՝ 17.3-49.3 անգամ, ցինկինը՝ 2.0-7.6 անգամ, արսենինը՝ 7.0-65.5 անգամ, իսկ կապարի պարունակությունը գերազանցել է մեկ դիտակետում՝ 1.4 անգամ:





Գծապատկեր 120. Վայոց ձորի մարզի հողերում մետաղների կոնցենտրացիաները

Սյունիքի մարզի ուսումնասիրված հողերում ՍԹԿ-ները գերազանցում են վանադիումի պարունակությունը՝ 1.1-3.1 անգամ, քրոմինը՝ 1.7-31.0 անգամ, նիկելինը՝ 6.3-37.8 անգամ, պղնձինը՝ 18.0-1175 անգամ, ցինկինը՝ 3.5-28.3 անգամ, արսենինը՝ 4.5-191.0 անգամ և կապարինը՝ 1.1-2.4 անգամ:



Գծապատկեր 121. Սյունիքի մարզի հողերում մետաղների կոնցենտրացիաները



## **Թափոնների հեռացման վայրերի ուսումնասիրություն**

Ի աջակցություն թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների ստեղծման, աղբավայրերի ներկա վիճակի ուսումնասիրման, ինչպես նաև այնտեղ կուտակվող աղբի ծավալների վերաբերյալ տեղեկություն հավաքագրելու նպատակով կատարվել են հետազոտություններ Ջերմուկ, Ստեփանավան, Իջևան, Մասիս, Արարատ, Արթիկ, Դիլիջան, Թալին, Հրազդան, Չարենցավան, Տաշիր համայնքներում:

### **Ջերմուկ համայնք**

2021 թվականին կատարվել են Ջերմուկի քաղաքային աղբավայրի հողի նմուշների հետազոտություն՝ ԿՕՍ-ներ հայտնաբերելու նպատակով: Ջերմուկի քաղաքային աղբավայրը գտնվում է քաղաքի կենտրոնից 6 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 2 հա տարածք: Աղբավայրում տեղադրվում է ոչ միայն Ջերմուկ համայնքի կողմից առաջացված կենցաղային թափոնները այլ նաև հարակից Կարմրաշեն, Հեր-Հեր, Գնդեվազ և Կեչուտ համայնքների կողմից առաջացված կենցաղային թափոնները, որոնք տարեկան կազմում են 1500մ<sup>3</sup>:

Ջերմուկի աղբավայրի հարակից տարածքների հողերի ուսումնասիրության նպատակով վերցվել են փորձանմուշներ աղբավայրի պարագծով (15 հատ): Հետազոտված աղբավայրի հողի նմուշներում հայտնաբերված են ՀՔՑՀ իզոմերների կոնցենտրացիաներ: Հատուկ ուշադրություն է դարձվել ՀՔՑՀ-ի իզոմերների, ԴԴՏ-ի իզոմերների և նրանց մետաբոլիտների, այլ պեստիցիդային պատրաստուկների ազդող նյութերի հայտնաբերված, հայտնաբերված պեստիցիդային ԿՕՍ-ների, հայտնաբերված բոլոր տեսակի ՊՔԲ-ների գումարային կոնցենտրացիային, որովհետև ՍԹԿ տրվում է շատ դեպքերում հենց այդ գումարային կոնցենտրացիաների համար, այլ ոչ թե առանձին նյութերի համար:

Ջերմուկի քաղաքային աղբավայրի 14 կետից (կետերի 93.33%) վերցրած հողի նմուշներում ՀՔՑՀ գումարային կոնցենտրացիան գերազանցում է ՍԹԿ-ի արժեքները 1.5-5.8 անգամ: Հայտնաբերվել են ԴԴՏ-ի իզոմերների կոնցենտրացիաներ, սակայն տվյալ դեպքում պատկերը այլ է՝ ՍԹԿ արժեքների գերազանցում հետազոտված նմուշներում չի դիտվում: Ջերմուկի աղբավայրում հայտնաբերված ԴԴՏ-ի իզոմերների և մետաբոլիտների գումարային կոնցենտրացիան չի գերազանցում ՍԹԿ ի տարբերություն այլ աղբավայրերի, որտեղ երբեմն հայտնաբերվում են նորմատիվային արժեքները գերազանցող ցուցանիշներ: Ջերմուկի քաղաքային աղբավայրի նմուշներից 11-ում հայտնաբերվել են ալդրինի, 5-ում՝ դիլդրինի և էնդրինի բարձր կոնցենտրացիաներ:

Թեպետ պեստիցիդային բնույթի ԿՕՍ-ների խնդիրները շատ արդիական են, սակայն պոլիբլորացված բիֆենիլները (ՊՔԲ) ևս վտանգավորության աստիճանով չեն զիջում վերջիններին:

Նմուշների մեծ մասում ԿՕՍ-ների գումարային կոնցենտրացիաները բավական բարձր են և մի քանի անգամ գերազանցում են ՍԹԿ-ները:

ԿՕՍ-ների գումարային կոնցենտրացիաների հայտնաբերումը հիմք են ծառայում անվանելու աղբավայրերը «ԿՕՍ-ների հնարավոր տարածման աղբյուր»: Անցկացրած հետազոտությունների արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել՝

• Ջերմուկ քաղաքի աղբավայրը հանդիսանում է ԿՕՍ-ների կուտակման և տարածման ակտիվ աղբյուր:

- Աղբավայրի հողի նմուշներում դիտվում են նորմատիվների արժեքները գերազանցող ԿՕԱ-ների կոնցենտրացիաներ:
- Չնայած նմուշներում պեստիցիդային ԿՕԱ-ների զգալի մասի գումարային կոնցենտրացիաներն ունեն նվազելու միտում, սակայն շարունակում են որոշակի վտանգ ներկայացնել:
- ԿՕԱ-ների տարածման աստիճանը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է հետևողական գտնվել, ինչպես նաև իրականացնել միջոցառումներ «կուտակվող» աղբի ծավալները նվազեցնելու, դրանք վերամշակելու և ոչնչացնելու ուղղությամբ:

### **Ստեփանավան համայնք**

Աղբավայրը գտնվում է քաղաքի կենտրոնից 3-4 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 7500մ<sup>2</sup> տարածք, որից 3300մ<sup>2</sup> աղբավայրի վերին հատվածն է, իսկ 4200մ<sup>2</sup>՝ ներքևի հատվածը: Ստեփանավան համայնքի աղբավայրում բացի Ստեփանավան համայնքի կողմից գոյացված կենցաղային թափոններից նաև տեղադրվում է Գյուլագարակ, Լոռի, Բերդ համայնքների կողմից առաջացած կենցաղային թափոնները, որը տարեկան կազմում է 2293,2 տոննա: Ստեփանավան համայնքի աղբահանությունը իրականացվում է համայնքի «Կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից, ամենօրյա հաճախականությամբ, 2-հատ Գազ-53 և 1-հատ Ռենո հատուկ աղբատար տեխնիկաների օգնությամբ: Ստեփանավան համայնքի աղբահանության սակագինը մեկ շնչի համար կազմում է 200 դրամ, որը հաջողվում է հավաքագրել 60-70%-ով:



## **Իջևան համայնք**

Աղբավայրը գտնվում է Լուսաձոր համայնքի վարչական տարածքում և զբաղեցնում է 3-4 հա տարածք: Աղբավայրը գտնվում է Իջևան քաղաքից 7 կմ. հեռավորության վրա: Վերոնշյալ աղբավայրում տեղադրվում են Իջևան համայնքի և հարակից Ենոքավան, Գետահովիտ գյուղերի կողմից առաջացված կենցաղային թափոնները, որոնք տարեկան կազմում են 2800-2900մ<sup>3</sup>: Իջևան, Ենոքավան և Գետահովիտ համայնքների աղբահանությունը իրականացվում է Իջևան համայնքի կոմունալ ծառայության կողմից, ամենօրյա հաճախականությամբ 1-հատ Գազ 53, 3-հատ Զիլ, 1-հատ ՄԿԶ և 2-հատ Զիլ հատուկ աղբատար մեքենաների օգնությամբ:



## **Մասիս համայնք**

Աղբավայրը գտնվում է Մասիս համայնքի վարչական տարածքում, քաղաքի կենտրոնից 8-9 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 13,7 հա տարածք: Մասիս քաղաքի աղբավայրում, բացի Մասիս քաղաքի բնակիչների կողմից առաջացված կենցաղային թափոնները, տեղադրվում են նաև հարակից 27 գյուղերի կողմից առաջացված կենցաղային թափոնները: Աղբավայրի տնօրինումը և կառավարումը վարձակալության պայմանագրի հիման վրա տրվել է «Մասիսի բնակարանային կոմունալ տնտեսություն» բաց բաժնետիրական ընկերությանը: Մասիս համայնքի աղբահանությունը իրականացվում է «Մասիս կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի կողմից, ամենօրյա հաճախականությամբ, 1 հատ Ռենո հատուկ աղբատար և 2 հատ Զիլ ինքնաթափի օգնությամբ: Աղբահանության սակագինը մեկ շնչի համար կազմում է 180 դրամ, որը հաջողվում է հավաքագրել 80-90%:



### Արարատ համայնք

Աղբավայրը գտնվում է Արարատ քաղաքի վարչական տարածքում քաղաքի կենտրոնից 2-3 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 6.1 հա տարածք: Արարատ համայնքի բնակչության թիվը կազմում է 21,800 մարդ, որոնք տարեկան առաջացնում են մոտ 2590 տոննա կենցաղային թափոններ: Արարատ համայնքի աղբահանությունը իրականացվում է «Արարատ համայնքի կոմունալ ծառայություն և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից, ամեն օր հաճախականությամբ 1 հատ ՄԿ-10, 2 հատ Գազ-3309, 1 հատ Զիլ և 1 հատ տոակտոր բարձիչի օգնությամբ: Աղբահանության սակագինը մեկ շնչի համար կազմում է 180 դրամ, որը հաջողվում է հավաքագրել 80-90%:



### Արթիկ համայնք

Արթիկ քաղաքի աղբավայրը գտնվում է քաղաքի կենտրոնից 3-4 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 3 հա տարածք: Աղբավայրում բացի Արթիք համայնքից իրենց կենցաղային թափոններն են տեղադրում նաև հարակից գյուղերը, որոնք խոշորացման արդյունքում դարձել են Արթիկ խոշորացված համայնքի մաս: Աղբավայրում տարեկան տեղադրվում է մոտ 3580մ<sup>3</sup> կենցաղային թափոն: Արթիկ համայնքի աղբահանությունը իրականացվում է «Շինարար Նարե» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի հիման վրա, ամեն օր հաճախականությամբ, 3 հատ հատուկ աղբատար և 1 հատ Զիլ բեռնատարի օգնությամբ: Արթիկ քաղաքի աղբահանության սակագինը մեկ շնչի համար կազմում է 160 դրամ, որը հաջողվում է հավաքագրել 50-60%:



### Դիլիջան համայնք

Աղբավայրը գտնվում է քաղաքից 12-13 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 32.77 հա տարածք: Դիլիջան համայնքի բնակչությունը կազմում է մոտ 25000 մարդ, որոնք տարեկան առաջացնում են 13000մ<sup>3</sup> կենցաղային թափոն: Դիլիջան համայնքի աղբավայրում տեղադրվում է նաև հետևյալ գյուղերի կողմից առաջացված կենցաղային թափոնները. Խաջարձան, Թեղուտ, Հաղարծին, Աղավնավանք, Վերին Գոշ և Ներքին Գոշ: Դիլիջան համայնքի աղբահանությունը իրականացվում է համայնքի «Կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ի





կողմից ամենօրյա հաճախականությամբ 2 հատ Կամազ Կ.Օ., 2 հատ Սատկո, 1 հատ բունկեռավոզ, 1 հատ Բոբ Կատ և 1 հատ Դ.Տ.-180 տեխնիկայի օգնությամբ: Աղբահանության սակագինը մեկ շնչի համար կազմում է 100 դրամ:

### ***Թալին համայնք***

Աղբավայրը գտնվում է Թալին քաղաքից 5 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 3 հա տարածք:

Աղբավայրում տարեկան տեղադրվում է 110-120 տ կենցաղային թափոն: Թալին համայնքի աղբահանությունը իրականացվում է համայնքի «կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի կողմից, ամեն օր



հաճախականությամբ, 2 աղբատար մեքենաների օգնությամբ: Աղբահանության սակագինը մեկ շնչի համար կազմում է 150 դրամ, որը հավաքագրվում է 70-80%:

### ***Հրազդան համայնք***

Հրազդան համայնքում ներկա պահին գոյություն ունի երկու աղբավայր: Աղբավայրերից մեկը գործում է Սովետական Միության ժամանակներից մինչ այսօր և զբաղեցնում է 5 հա տարածք: Աղբավայրը գտնվում է Հրազդան քաղաքից 5-7 կմ հեռավորության վրա: Հրազդան համայնքի աղբավայրում տեղադրվում են ոչ միայն Հրազդան համայնքի կողմից



գոյացված կենցաղային թափոնները, այլ նաև Ծաղկաձոր համայնքի կողմից գոյացված կենցաղային թափոնները: Աղբավայրում տարեկան տեղադրվում է 9615 տ կենցաղային թափոն: Հրազդան համայնքի աղբահանությունը իրականացվում է «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սան մաքրում» հիմնարկը, ամեն օր հաճախականությամբ 5 հատ Գազ 53, 2 հատ Զիլ հատուկ աղբատար և 1 հատ Կամազ աղբատար տեխնիկաների օգնությամբ: Հրազդան համայնքի աղբահանության սակագինը մեկ շնչի համար կազմում է 200 դրամ, որը հավաքագրվում է 75-80%: Իսկ մյուս աղբավայրը ներկա պահին չի շահագործվում, քանի որ կատարվում են շինարարական աշխատանքներ:



## **Չարենցավան համայնք**

Աղբավայրը գտնվում է Չարենցավան քաղաքի կենտրոնից 5 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 3 հա տարածք: Չարենցավան համայնքի աղբավայրում տեղադրվում է նաև հարակից 5 համայնքների կողմից գոյացված կենցաղային թափոնները, որոնք տարեկան կազմում են 3200մ<sup>3</sup>: Չարենցավան համայնքի աղբահանությունը իրականացվում է «Բարմակ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրային հիմքերով, 2 հատ Գազ 53 հատուկ աղբատար, 2 հատ Զիլ և 3 հատ Գազ 53 ինքնաթափ տեխնիկայի օգնությամբ: Աղբահանության սակագինը մեկ շնչի համար Չարենցավան համայնքում կազմում է 200 դրամ, իսկ գյուղերում 150 դրամ:



## **Տաշիր համայնք**

Աղբավայրը գտնվում է քաղաքի կենտրոնից 5-6 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 4 հա տարածք: Տաշիր համայնքի աղբավայրում տեղադրվում է ոչ միայն Տաշիր համայնքի այլ նաև հարակից Մեծավան և Սարչապետ գյուղերի կողմից գոյացված կենցաղային թափոնները, որոնք տարեկան կազմում են 4200 տ: Տաշիր համայնքի աղբահանությունը իրականացվում է «Շին» ՍՊԸ-ի կողմից, սակայն քաղաքի գլխավոր փողոցի և շենքերի հատվածի աղբահանությունը իրականացվում է համայնքի կոմունալ ծառայության կողմից: Աղբահանության սակագինը մեկ շնչի համար կազմում է 150 դրամ, որը հավաքագրվում է 40-50%:



**Կազմակերպությունների գործունեությունից առաջացած թափոնների  
վիճակագրական տվյալների ուսումնասիրություն**

Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման միջոցառումներին ի աջակցություն, կատարվել է ՀՀ տարածքում 2020 թվականին առաջացած թափոնների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրում և վերլուծություն: 2020 թվականին հաշվետվություն ներկայացրած ձեռնարկությունների թիվը կազմում է 1244 ձեռնարկություն, որոնցից 1038-ը՝ մարզերում, 206-ը՝ Երևան քաղաքում: Երևան քաղաքում 206 հաշվետվություն ներկայացրած ձեռնարկություններից 107-ը (52.4%) կազմում են արդյունաբերական ձեռնարկությունները (քիմիական արդյունաբերություն՝ 2%, հանքարդյունաբերություն՝ 1.5%, մեքենաշինություն, մետաղամշակում, էլեկտրատեխնիկական սարքաշինություն՝ 9.3%, շինանյութերի արտադրություն՝ 13.7%, սննդի արդյունաբերություն և գյուղատնտեսություն՝ 12.7%, փայտամշակման արդյունաբերություն՝ 1.5%, թեթև արդյունաբերություն՝ 3.9%, վառելիքաէներգետիկ արդյունաբերություն՝ 3.9%, այլ ճյուղեր՝ 3.9%), իսկ 97-ը (47.6%) կազմում են սպասարկման ոլորտի կազմակերպությունները (առևտրի կենտրոններ, շուկաներ՝ 2.9%, բժշկական հաստատություններ՝ 39.2%, տրանսպորտ՝ 2.5%, կապ՝ 1%, հյուրանոցներ՝ 1%, տպարաններ՝ 0.5%, ուսումնական հաստատություններ՝ 0.5%):


Վտանգավորության 1-ին և 2-րդ դասի թափոններ գոյացել են քիմիական արդյունաբերության, հանքարդյունաբերության, մեքենաշինության, շինանյութերի արտադրության, վառելիքաէներգետիկ, գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության ոլորտներում, ինչպես նաև առևտրի կենտրոնների, շուկաների, տոնավաճառների, բժշկական հաստատությունների, տրանսպորտի, հյուրանոցների, ռեստորանների սպասարկման ոլորտներում:

**Աղյուսակ 24. 2020 թվականին ՀՀ-ում առաջացած թափոնների քանակն ըստ վտանգավորության դասերի՝**

<b>Վտանգավորության դաս</b>	<b>Թափոնների քանակ, տ</b>
<i>I դաս</i>	<i>6.936</i>
<i>II դաս</i>	<i>37.161</i>
<i>III դաս</i>	<i>44920.449</i>
<i>IV դաս</i>	<i>24937529.530</i>
<i>V դաս</i>	<i>48427901.946</i>
<b>Ընդհանուր</b>	<b>73410396.024</b>

*1-ին դաս՝ չափազանց վտանգավոր, 2-րդ դաս՝ բարձր վտանգավորության, 3-րդ դաս՝ չափավոր վտանգավոր, 4-րդ դաս՝ քիչ վտանգավոր, 5-րդ դաս՝ ոչ վտանգավոր կամ գործնականորեն անվտանգ*

**Կազմակերպություններում առաջացած թափոնների քանակն ըստ վտանգավորության դասերի / 2020 թվական**



Մարզեր	Առաջացած թափոնների քանակը տ/տ
Գեղարքունիքի մարզ	42866029.88
Մյուսիքի մարզ	30401063.36
Երևան	46577.45365
Լոռու մարզ	43933.34924
Արարատի մարզ	16856.4098
Շիրակի մարզ	12819.3547
Արմավիրի մարզ	8312.31535
Արագածոտնի մարզ	6045.46412
Կոտայքի մարզ	4323.1876
Տավուշի մարզ	4229.695
Վայոց ձորի մարզ	205.556

**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**

- Սարգկենտրոններ (Red circle)
- Քաղաքներ (Green circle)
- Ճանապարհներ (Yellow line)
- Փետային ցանց (Blue line)
- ՀՀ պետական սահման (Red line)
- Լճեր և ջրամբարներ (Light blue area)

0 10 20 40 60 80 կմ

## ԱՆՏԱՌՆԵՐ

### **Անտառպահպանություն**

Անտառպահպանության աշխատանքների իրականացման համար հիմք են հանդիսացել արբանյակային պատկերների վերծանման և համադրման արդյունքները: 2021 թվականի ընթացքում իրականացվել են պահպանության վիճակի մասնակի դիտարկում-ուսումնասիրություններ «Հայաստան» ՊՈԱԿ-ի 16 անտառտնտեսություն մասնաճյուղերում: Արդյունքները ներկայացված են աղյուսակ .

#### **Աղյուսակ 25. Ապօրինի օջախների քանակը**

<b>Կազմակերպություն</b>	<b>Ապօրինի օջախների քանակ (հատ)</b>
«Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ	5
«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ	-
«Զանգեզուր կենտրոնային համայնք» ՊՈԱԿ	-
«Խոսրովի անտառ պետական արգելոց» ՊՈԱԿ	-
«Ճամբարակ» ա/տ	6
«Հրազդան» ա/տ	4
«Տաշիր» ա/տ	1
«Վանաձոր» ա/տ	5
«Սյունիք» ա/տ	-
«Ստեփանավան» ա/տ	10
«Վանաձոր» ա/տ	5
«Թումանյան» ա/տ	5
«Բջին» ա/տ	-
«Արծվաբերդ» ա/տ	4
«Սևբար» ա/տ	-
«Նոյեմբերյան» ա/տ	1
«Զիլիզա» ա/տ	-
«Լավար» ա/տ	4
«Կապան» ա/տ	1
«Վայոց ձոր» ա/տ	-
<b>Ընդամենը</b>	<b>51</b>

### **Անտառային հրդեհներ**


#### **Անտառային հրդեհների դաշտային ուսումնասիրություններ**

2021թ. ընթացքում Վանաձորի անտառտնտեսության կողմից կազմվել է անտառային հողերում 2021թ. տեղի ունեցած հրդեհների դեպքերի թվով 3 արձանագրություն, անտառածածկ տարածքներում հրդեհված ընդհանուր տարածքի մակերեսը կազմել է 50.8 հա: Դաշտային ուսումնասիրություններ են իրականացվել Փամբակի անտառպետության 10 և 12-րդ քառակուսիների 1, 5, 6, 7, 8, 20, 21 անտառամասերում: Հրդեհի ընդհանուր մակերեսը կազմում էր 38 հա: Որտեղ առկա էր՝ վառված անտառանյութ: Այրված տեղամասում առկա էր կաղնի ծառատեսակի բնական վերած և բարձր խոտածածկույթ:




**Անտառային հրդեհների ուսումնասիրություններ հեռահար զոնդավորման և ԱՏՀ միջոցով**

Իրականացվել է 2021թ. օգոստոսի 24-ին «Խոսրովի անտառ» պետական արգելոցում տեղի ունեցած հրդեհված տարածքի օդալուսանկարահանում, տվյալների վերծանման և մշակման արդյունքում պարզվել է, որ այրված ընդհանուր տարածքի մակերեսը կազմել է 3.94հա:




Ուսումնասիրվել է նաև 2021 թվականի սեպտեմբերի 15-ին Արևիք ազգային պարկում բռնկված հրդեհը: Ուսումնասիրություններն իրականացվել է Մենտինել-2 արբանյակից ստացված պատկերների շնորհիվ: Ներբեռնվել են սեպտեմբերի 20, 23 և 25-ի պատկերները, որոնց մշակման արդյունքում ստացվել են տվյալ օրերի համար այրված տարածքների մակերեսները համապատասխանաբար 423հա, 703.77հա և 713.67հա:






Իրականացվել է «Հրագրանի անտառտնտեսություն» մասնաձյուղի, Երևանի տեղամասի, Երևանի անտառպետությունում 2021 թվականի հոկտեմբերի 10-ին հրդեհված տարածքի օդալուսանկարահանումը՝ ԱԹՄ-ով: Օդալուսանկարահանումը իրականացվել է 2021 թվականի հոկտեմբերի 28-ին DJI Mavic2 pro ԱԹՄ-ով, 120 մ բարձրությունից: Նկարները կապակցվել և մշակվել են PIX4D ծրագրային փաթեթով: Կազմվել են հրդեհված տարածքի պատկեր և քարտեզ-սխեմա՝ ArcGIS ծրագրային փաթեթի գործիքակազմով: Կոորդինատային համակարգը՝ ARM\_PCS: Հրդեհված տարածքի մակերեսը կազմում է 5.73հա:



ԱՏՀ և ՀԶ տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվել են «Արծվաբերդի» անտառտնտեսության «Նորաշեն» անտառպետության տարածքում բռնկված հրդեհի վերձանման աշխատանքներ: Աշխատանքների իրականացման համար հիմք են հանդիսացել Մենտինել-2 արբանյակից ստացված տվյալները: NBR գործակիցների համադրման արդյունքում պարզ է դարել, որ հրդեհը զբաղեցրել է մոտ 18 հա տարածք: Հրդեհված տարածքի քարտեզ սխեման ներկայացվում է ստորև՝



**2021թ. ընթացքում անտառածածկ և բուսածածկ այլ տարածքներում տեղի ունեցած հրդեհների քանակն ըստ «Հայաստան» ՊՈԱԿ-ի և հատուկ պահպանվող տարածքների կողմից տրամադրված տեղեկատվության**

«Հայաստան» ՊՈԱԿ անտառային հողերում տեղի ունեցած հրդեհների ընդհանուր քանակը կազմել է 29, որի արդյունքում հրդեհված ընդհանուր տարածքը կազմել է 225.607 հա, որից 150.205 հա անտառածածկ տարածքներում, իսկ 75.402 հա այլ բուսածածկ տարածքներում:

Գրանցված հրդեհներից 3-ի պատճառ է հանդիսացել համայնքի տարածքից ներթափանցումը, 1-ը՝ բարձր լարման էլեկտրական լարի ընկնելու հետևանքով, իսկ 25-ի պատճառները անհայտ են:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ անտառային հողերում գրանցվել է հրդեհի 2 դեպք, որի արդյունքում հրդեհված ընդհանուր տարածքը կազմել է 7.5հա, որից 7 հա անտառածածկ տարածքներում, իսկ 0.5 հա այլ բուսածածկ տարածքներում: Հրդեհների պատճառը երկու դեպքում էլ եղել է բնակչության անփութության հետևանքով:

«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ անտառային հողերում գրանցվել է հրդեհի 11 դեպք, ընդհանուր հրդեհված տարածքը կազմել է 12.23 հա՝ ամբողջությամբ անտառածածկ տարածք, հրդեհներից մեկի պատճառը հանդիսացել է համայնքի տարածքից ներթափանցումը, մնացած 10 դեպքի պատճառներն անհայտ են:

«Խոսրովի անտառ պետ. արգելոց» ՊՈԱԿ անտառային հողերում գրանցվել է հրդեհի 2 դեպք, ընդհանուր հրդեհված տարածքը կազմել է 2 հա՝ ամբողջությամբ անտառածածկ տարածք, որոնց պատճառը է հանդիսացել կայծակը:

«Մևան ազգային պարկ» ՊՈԱԿ անտառային հողերում գրանցվել է հրդեհի 2 դեպք, ընդհանուր հրդեհված տարածքը կազմել է 0.5 հա՝ ամբողջությամբ այլ բուսածածկ տարածք, որոնց պատճառները անհայտ են:

### *Անտառվերականգնում*

Իրականացվել են ուսումնասիրություններ 2019-2020թթ. ընթացքում իրականացված անտառապատման և բնական վերաճի օժանդակման, կոճղաշիվային հատման միջոցով անտառվերականգնման միջոցառումները: Մասնավորապես դիտարկումներ են իրականացվել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 12 անտառտնտեսություն մասնաձյուղերում՝ «Ճամբարակ», «Հրագդան», «Տաշիր», «Վանաձոր», «Սյունիք», «Ստեփանավան», «Իջևան», «Արծվաբերդ», «Նոյեմբերյան», «Սևքար», «Զիլիզա»: Անտառապատման ուսումնասիրություններ են ընդհանուր իրականացվել 223 հա տարածքում:

Հայտնաբերված հիմնական խնդիրներն են.

- Անտառապատման համար նախատեսված մակերեսների անհամապատասխանությունը իրական չափերին
- Ծառատեսակների ոչ համապատասխան ընտրությունը բնակլիմայական պայմաններին
- Ծառատեսակների ցածր կայունականությունը
- Խնամքի աշխատանքների թերի լինելը
- Ոռոգման համակարգերի բացակայությունը
- Ցանկապատների թերի լինելը

Ըստ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի և հատուկ պահպանվող տարածքների կողմից տրամադրված տեղեկատվության 2021թ. ընթացքում իրականացված անտառվերականգնման աշխատանքները

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից պետ. բյուջեով ընդհանուր 216 հա տարածքում իրականացվել են անտառվերականգնման աշխատանքներ, որից 133 հա անտառային մշակույթների տնկում և ցանք և 83 հա վրա կոճղաշիվային վերաճին օժանդակման միջոցառումներ, աճեցվել է 250000 հատ սերմնաբուսակ:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից պետ. բյուջեով ընդհանուր 10 հա տարածքում իրականացվել են անտառվերականգնման աշխատանքներ՝ ցածրարժեք և ցածր լրիվության անտառների վերականգնման նպատակով, հիմնվել է նաև 3.2 հա տարածքով տնկարան, աճեցվել է 30210 հատ սերմնաբուսակ:

«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից պետ ծրագրով և դրամաշնորհներով 8հա տարածքում իրականացվել են ցանքսի աշխատանքներ և 2 հա տարածքում բնական վերաճի օժանդակման միջոցառումներ:

«Մևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից պետ. բյուջեով ընդհանուր 2.8 հա տարածքում իրականացվել են անտառաշակույթների հիմնման աշխատանքներ ցանքսի միջոցով, հիմնվել է նաև տնկարան 2.5հա-ի վրա և աճեցվել է 24000 հատ տնկի:

**Փայտանյութի սպառման շուկայի ուսումնասիրություն**

Ծառայության կողմից ՀՀ մի շարք մարզերում և Երևան քաղաքում իրականացվել են փայտանյութի սպառման շուկայի ուսումնասիրություններ, որոնց ընթացքում ուսումնասիրվել են վառելափայտի, տախտակի, մանրատախտակի, գերանի և ածուխի շուկայական արժեքները: Ուսումնասիրությունն իրականացվել են վաճառակետեր այցելելու, հեռախոսով անանուն հարցումներ կատարելու և կայքերում տեղադրված տեղեկատվության վերլուծության միջոցով: Ուսումնասիրությունների արդյունքները ներկայացվում են ստորև՝ աղյուսակի տեսքով.

**Աղյուսակ 26. Փայտանյութի սպառման շուկայի ուսումնասիրություններ**

Տեսակ	Արժեք, դրամ
<b>Երևան</b>	
Վառելափայտ	30000-35000 մ <sup>3</sup>
Տախտակ ներմուծված	120000-145000 մ <sup>3</sup> (սոճենի)
Գերան	700-800 զձմ (սոճենի)
Փայտածուխ	500-700 կգ
<b>Տավուշ</b>	
Վառելափայտ	15000-20000մ <sup>3</sup>
Տախտակ ներմուծված	12000-15000մ <sup>3</sup> (սոճենի)
Տախտակ տեղական	60000-100000մ <sup>3</sup> (հաճարենի)
Գերան	40000մ <sup>3</sup> (սոճենի), 40000-60000մ <sup>3</sup> (հաճարենի)
Փայտածուխ	200-400կգ
<b>Սյունիք</b>	
Վառելափայտ	18000-20.000մ <sup>3</sup>
Տախտակ ներմուծված	130000-150000մ <sup>3</sup> (սոճենի)
Տախտակ տեղական	150000-200000մ <sup>3</sup> (կաղնի թաց) 250000-300000մ <sup>3</sup> (կաղնի չոր) 120000-130000 մ <sup>3</sup> (բոխի չոր) 170000-180000մ <sup>3</sup> (սոճենի)
Գերան	40000մ <sup>3</sup> (սոճենի)
Մանրատախտակ	6000զձմ (կաղնի թաց) 8000զձմ (կաղնի չոր) 3000-5000զձմ (բոխի թաց) 5000-6000զձմ (բոխի չոր)
Փայտածուխ	200-400կգ
<b>Գեղարքունիք</b>	
Վառելափայտ	20000-25000մ <sup>3</sup>

<i>Տեսակ</i>	<i>Արժեք, դրամ</i>
<i>Տախտակ ներմուծված</i>	<i>110000-120000մ<sup>3</sup> (սոճենի)</i>
<i>Տախտակ տեղական</i>	<i>70000-80000մ<sup>3</sup> (սոճենի) 110000մ<sup>3</sup> (հաճարենի)</i>
<i>Գերան</i>	<i>50000մ<sup>3</sup> (կաղնի) 40000մ<sup>3</sup> (հաճարենի)</i>
<i>Փայտածուխ</i>	<i>200-400կգ</i>
<b><i>Լոռի</i></b>	
<i>Վառելիքայտ</i>	<i>12000-15000մ<sup>3</sup></i>
<i>Տախտակ տեղական</i>	<i>80000-100000մ<sup>3</sup> (լոռենի) 50000-60000մ<sup>3</sup> (հաճարենի) 200000մ<sup>3</sup> (կաղնի)</i>
<i>Գերան</i>	<i>50000 մ<sup>3</sup> (կաղնի), 30000-35000մ<sup>3</sup> (հաճարենի) 30000մ<sup>3</sup> (լոռենի) 80000մ<sup>3</sup> (հացենի)</i>
<i>Փայտածուխ</i>	<i>200-400կգ</i>

### ***Ներմուծում և արտահանում***

2021թ. ընթացքում ՀՀ ներմուծված և արտահանված փայտանյութը՝ ըստ անվանման և չափման միավորների (համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած տեղեկատվության).

### ***Ներմուծում***

Վառելիքային փայտանյութ-83164կգ  
 Փայտածուխ-126987.1 կգ  
 Անտառանյութ անմշակ-966 խմ  
 Անտառանյութ երկայնակի սղոցած-3862.8 խմ  
 Սղոցանյութեր-59932.9 կգ, 7167.5 քմ և 349.4մ

### ***Արտահանում***

Վառելիքային փայտանյութ-7150կգ  
 Փայտածուխ-11810 կգ  
 Անտառանյութ երկայնակի սղոցած-493.8 խմ

ԵՏՄ երկրներից ՀՀ ***ներմուծված*** (ըստ ներկայացված վիճ. հաշվետվությունների)

Վառելիքային փայտանյութ-1307984.9կգ  
 Փայտածուխ-667953.5կգ  
 Անտառանյութ անմշակ-1036.8 խմ  
 Անտառանյութ երկայնակի սղոցած-198001.2 խմ  
 Սղոցանյութեր-5989292.7 կգ, 705.5 քմ և 27589.2մ

Ըստ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից «Արտահանվող և ձեռք բերված փայտանյութի կամ դրանից պատրաստված ապրանքների համապատասխանության մասին» եզրակացությունների վերաբերյալ տրամադրած տեղեկատվության՝ 2021թ.

արտահանման եզրակացություն է տրվել 81 խմ հաճարի տախտակի, ընկուզենուցատրաստված խզակոթի՝ 65.9խմ և 22.3 խմ հաճարի այլ դետալների համար:

**«Արծվաբերդի» անտառտնտեսության անտառածածկում 2016-2020 թվականների ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների դինամիկայի ուսումնասիրություն**

Ուսումնասիրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Արծվաբերդի» անտառտնտեսություն մասնաճյուղի անտառածածկ տարածքներում 2016-2020 թվականների ընթացքում տեղի ունեցած սաղարթի փոփոխությունները՝ օգտագործելով «Sentinel-2» արբանյակային պատկերները:

Ստացված տվյալները ներկայացվում են ստորև՝

- 2016-2017 թթ. – մոտ 46.84 հա
- 2017-2018 թթ. – մոտ 29.68 հա
- 2018-2019 թթ. – մոտ 24.61 հա
- 2019-2020 թթ. – մոտ 25.34 հա

*Պայմանավորված «Sentinel-2» արբանյակային պատկերների տարածական լուծաչափով (10մ)՝ ստացված տվյալները մոտավոր են (սաղարթի նվազագույն փոփոխության ենթարկված դիտարկված մակերեսը կազմում է 0.03 հա):*

**«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Հրազդան», «Արծվաբերդ», «Եղեգնուտ», «Գուգարք» և «Նոյեմբերյան» անտառտնտեսություն մասնաճյուղերի անտառածածկում 2018-2019թթ. և 2019-2020թթ. ընթացքում տեղի ունեցած սաղարթի փոփոխությունների վերձանման աշխատանքներ**

Ուսումնասիրություններն իրականացվել են «Sentinel-2» արբանյակային պատկերների համադրման և վերձանման միջոցով: Յուրաքանչյուր անտառտնտեսության սահմաններում վեգետացիոն ցուցիչների հաշվարկների հիման վրա առանձնացվել են սաղարթում տեղի ունեցած փոփոխությունները, որոնք կարող են կապված լինել ապօրինի հատումների, հատատեղերի շահագործման, քամատապալ և/կամ ձյունակոտոր ծառերի, վնասատուներով և հիվանդություններով վարակված տեղամասերի առկայության և մի շարք այլ նախադրյալների հետ:

Արձանագրված փոփոխությունները ներկայացվել են .shp ձևաչափով, ինչպես նաև ստացվել են համապատասխան աղյուսակները, որոնք արտահայտում են համապատասխան տեղեկատվություն փոփոխություններն ընդգրկող անտառպետությունների, քառակաուսիների և անտառամասերի վերաբերյալ:

Քանի որ ներկայումս «Հրազդանի» անտառտնտեսություն մասնաճյուղի թվային քարտեզը բացակում է, տվյալ անտառտնտեսության առանձնացված կետային օջախների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է կոորդինատների տեսքով, ինչպես նաև հնարավոր են այնպիսի դեպքեր, որ մեր կողմից առանձնացված փոփոխությունները գրանցված լինեն անտառտնտեսության սահմաններից դուրս:



**Աղյուսակ 27. Որոշ անտառտնտեսություններում փոփոխված օջախների քանակը**

Անտառտնտեսություն	Փոփոխված օջախների քանակ	
	2018-2019թթ.	2019-2020թթ.
Հրազդան	19	64
Արծվաբերդ	210	493
Եղեգնուտ	154	221
Գուգարք	55	28
Նոյեմբերյան	94	1106



**ՀՀ Սյունիքի, Կոտայքի և Վայոց Ձորի, Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում անտառածածկի վերհանման աշխատանքներ**

Վերձանումն իրականացվել է ԱՏՀ միջավայրում՝ բուսականության նորմավորված ցուցիչի կիսաավտոմատ, առանց վերահսկելի դասկարգման ալգորիթմի հիման վրա: Արբանյակային պատկերների տարածական լուծաչափով պայմանավորված ստացված տվյալները մոտավոր են և չեն արտահայտում ամբողջ անտառածածկ մակերևույթը (մասնավորապես գիհու նոսրուտները), առկա է նաև ոչ միանշանակ սահմանների առանձնացում, քանզի կիրառված պատկերների տարածական լուծաչափը կազմում է 10 մ/պ:



Անտառածածկի տվյալները ստացվել են 2019թ. և 2020թ. արբանյակային պատկերների վերձանման հիման վրա:

**Աղյուսակ 28. Անտառածածկի տվյալներն ըստ մակերեսի**

Մարզ	Անտառածածկի մակերես, հա
Արարատ	6784
Արագածոտն	4602
Գեղարքունիք	13286
Շիրակ	1445
Լոռի	83369
Տավուշ	131078
Վայոց Ձոր	5570
Կոտայք	14278
Սյունիք	64800
Ընդհանուր	325212

























«Sentinel-2» արբանյակից ստացված պատկերների միջոցով ուսումնասիրվել են Արծվանիկի և Թեղուտի պոչամբարների մակերեսների փոփոխությունը:

Արծվանիկի պոչամբարի մակերեսը 2020 թվականի հունիս ամսվա դրությամբ կազմել է 343.39հա, իսկ 2021 թվականի հունիսին՝ 356.68 հա: Մակերեսը մեծացել է մոտ 13.3հա-ով կամ 3.8%-ով.



Թեղուտի պոչամբարի մակերեսը 2020 թվականի օգոստոս ամսվա դրությամբ կազմել է 46.18հա, իսկ 2021 թվականի հունիսին՝ 51.87 հա: Մակերեսը մեծացել է մոտ 5.7հա-ով կամ 11%-ով.



Դսեղի» անտառտնտեսության անտառածածկում 2016-2020 թվականների ընթացքում տեղի ունեցած փոփոխությունների դինամիկայի ուսումնասիրության աշխատանքների արդյունքները՝

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Դսեղի» անտառտնտեսություն մասնաճյուղի անտառածածկ տարածքներում 2016-2020 թվականների ընթացքում տեղի ունեցած սաղարթի փոփոխությունների ուսումնասիրությունների արդյունքները, օգտագործելով «Sentinel-2» արբանյակային պատկերները, ներկայացված են.

*Աղյուսակ 29. «Դսեղի» անտառտնտեսության սաղարթի փոփոխությունները 2016-2020թթ.*

<i>Ամսաթիվ</i>	<i>Մոտավոր մակերեսը, հա</i>
<i>2016.08.05 - 2017.08.30</i>	<i>15.68</i>
<i>2017.08.30 - 2018.07.01</i>	<i>11.11</i>
<i>2018.08.30 - 2019.08.15</i>	<i>22.61</i>
<i>2019.08.15 - 2020.08.09</i>	<i>7.29</i>

*\*Պայմանավորված «Sentinel-2» արբանյակային պատկերների տարածական լուծաչափով (10մ)՝ ստացված տվյալները մոտավոր են (սաղարթի նվազագույն փոփոխության ենթարկված դիտարկված մակերեսը կազմում է 0.01 հա):*

**Հավելված 1. ՀՀ գետերի ջրի որակը 2021 թվականին**

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հյուսիսային	Փամբակ	0.5 կմ գյ. Խնկոյանից վերև (1)	-	2-րդ	2-րդ
		0.5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	Նիտրատ իոն, ԸԱԱ	3-րդ	3-րդ
		1 կմ ք. Վանաձորից վերև (3)	Ամոնիում իոն, նիտրատ իոն, ԿՉՆ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	ԹԿՊ, նիտրատ իոն, մոլիբդեն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ԸԱԱ, ԿՉՆ		4-րդ		
	Ամոնիում իոն		5-րդ		
	Դեբեդ	0.5 կմ Մարց գետի թափման կետից ներքև (5)	Մանգան, ԿՉՆ	3-րդ	5-րդ
			Մոլիբդեն	5-րդ	
		0.5 կմ ք. Այրումից վերև (6)	Պղինձ, ԿՉՆ	3-րդ	4-րդ
			Մոլիբդեն	4-րդ	
	Սահմանի մոտ (7)	Պղինձ, ԿՉՆ	3-րդ	4-րդ	
		Մոլիբդեն	4-րդ		
	Չորագետ	0.5 կմ ք. Ստեփանավանից վերև (8)	-	2-րդ	2-րդ
		Գետաբերան (10)	-	2-րդ	2-րդ
	Տաշիր	0.5 կմ գյ. Միխայելովկայից վերև (11)	Մանգան, երկաթ, ալյումին, ԿՉՆ	3-րդ	3-րդ
		0.5 կմ գյ. Սարատովկայից ներքև (12)	Երկաթ, ալյումին, ԿՉՆ	3-րդ	3-րդ
	Մարց գետ	Գետաբերան (13)	-	2-րդ	2-րդ
	Ախթալա	Գետաբերան (14)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, կալցիում, մագնեզիում	3-րդ	5-րդ
			Մոլիբդեն	4-րդ	
			Ցինկ, պղինձ, կադմիում, մանգան, կոբալտ, սուլֆատ իոն, ԿՉՆ	5-րդ	
	Գարգառ	Ակունք (210)	-	2-րդ	2-րդ

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս	
Հյուսիսային	Գարգառ	Գետաբերան (342)	Սոլիբրեն	3-րդ	4-րդ	
			ԿՉՆ	4-րդ		
	Շնոդ	Գետաբերան (343)	Ամոնիում իոն, պղինձ, կալցիում	3-րդ	5-րդ	
			Սուլֆատ իոն, ԿՉՆ	4-րդ		
			Սոլիբրեն	5-րդ		
	Աղստն	1.2 կմ ք. Դիլիջանից վերև (15)	Երկաթ, ԿՉՆ	3-րդ	3-րդ	
				3-րդ	3-րդ	
			2 կմ ք. Բջնանից վերև (17)	Մանգան, բարիում	3-րդ	4-րդ
				Երկաթ, ԿՉՆ	4-րդ	
			2 կմ ք. Բջնանից ներքև (18)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, երկաթ, բարիում, ԿՉՆ	3-րդ	3-րդ
					3-րդ	3-րդ
	Գետիկ	0.5 կմ գյ. Վահանից վերև (19)	Մանգան, կոբալտ, բարիում, ալյումին	3-րդ	4-րդ	
			Երկաթ, ԿՉՆ	4-րդ		
		Գետաբերան (20)	Երկաթ	3-րդ	5-րդ	
			Բարիում, ԿՉՆ	4-րդ, 5-րդ		
	Ախուրյան	Ախուրյան	1 կմ գյ. Ամասիայից ներքև (32)	Ֆոսֆատ իոն, արսեն, մանգան, ընդհանուր ֆոսֆոր, ԿՉՆ	3-րդ	4-րդ
Ամոնիում իոն, երկաթ				4-րդ		
0.8 կմ ք. Գյումրիից վերև (33)			Ամոնիում իոն, արսեն, մոլիբդեն, ԿՉՆ	3-րդ	4-րդ	
			Երկաթ	4-րդ		
5 կմ ք. Գյումրիից ներքև (34)			Ֆոսֆատ իոն, մոլիբդեն, մանգան, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ	
				Ամոնիում իոն, նիտրիտ իոն, երկաթ, ԿՉՆ		4-րդ



Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Ախուրյան	Ախուրյան	0.5 կմ գյ. Բազարանից ներքև (35)	Արսեն, մոլիբդեն, մանգան	3-րդ	4-րդ
			Երկաթ, ԿՉՆ	4-րդ	
	Աշոցք	0.5 կմ գյ. Մուսայել-յանից վերև (36) Գետաբերան (37)	-	2-րդ	2-րդ
			Արսեն, բոր	3-րդ	3-րդ
	Կարկաչուն	Գետաբերան (38)	Երկաթ, կալցիում, նատրիում, բոր, ՇԱԱ	3-րդ	5-րդ
			Լուծված թթվածին, նիտրիտ իոն, մոլիբդեն, սուլֆատ իոն, ԿՉՆ	4-րդ	
			ԹԿՊ, ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	
	Մեծամոր	10 կմ ք. Վաղարշապատից հարավ (40)	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, արսեն, երկաթ, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
			Ամոնիում իոն, մանգան	4-րդ	
		11 կմ ք. Վաղարշապատից հարավ-արևելք (41)	Լուծված թթվածին, ԹՔՊ, ֆոսֆատ իոն, արսեն, մանգան, երկաթ, բոր	3-րդ	4-րդ
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
